ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 17-Ն «30» ապրիլի 2021

## 2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՓՈՐՁԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԸ (8-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. 2021-2022 ուսումնական տարում ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում փորձարկելու նպատակով հաստատել «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը (8-12-րդ դասարաններ)՝ համաձայն հավելվածի:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

/պաշտոնակատար/

30.04.2021

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

**Հավելված**

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի**

**2021 թվականի ապրիլի -ի N հրամանի**

# «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳՐԵՐ (8-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

«ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 8-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

## 1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

**ՆԶՊ առարկայական ծրագրի նպատակն է՝ զինվորական պատրաստության հիմունքերից նվազագույն գիտելիքներ տիրապետող, արդիական գիտելիքների, գործնական կարողությունների ու հմտությունների միջոցով՝ արտակարգ իրավիճակներում կենսապահովում իրականացնող, հասարակական բարձր գիտակցություն, բարոյահոգեբանական որակներ և վարքային դրսևորումներ ունեցող անձի ձևավորումը:**

**Հիմնական (միջին) ծրագրում ««նախնական զինվորական պատրաստություն»» առարկայի ուսուցման նպատակն է՝**

- զինվորական պատրաստության հիմունքերի վերաբերյալ տեսական գիտելիքների հաղորդումը,
- շարժողական ընդունակությունների (արագաշարժության, ուժի, դիմացկունության, ճկունության, հավասարակշռության և շարժումների կոորդինացիայի) սկզբնական դետալների զարգացումը,
- մտային (մտածողության ակտիվություն, վերլուծականություն, տրամաբանություն, մտքի ճկնություն, քննադատողականություն, ուշադրության կենտրոնացում և տեղափոխում), ֆիզիոլոգիական (ուղեղիկի, ներքին ականջի, շնչառության կանոնավորում), հոգեբանական (կամք, նպատակասլացություն, գիտակցված կարգապահություն, ինքնուրույնություն, ինքնավստահություն, հոգեբանական կայունություն, ինքնակատարելագործում) որակների ձևավորումը,
- հասարակական բարձր գիտակցության, ներքին արժեհամակարգի, վարքային նորմերի, հասարակական դիրքորոշումների և համապատասխան վարքագծի ձևավորումը,
- սովորողների մեջ բարոյական բարձր հատկությունների՝ պատասխանատվության, հաստատակամության, ընկերասիրության, փոխօգնության, հանդուրժողականության և այլ հատկանիշների ձևավորումը,
- առողջ ապրելակերպի կանոնների պահպանման գիտակցության ձևավորումը,

**Միջնակարգ (ավագ) ծրագրում «նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցման նպատակն է՝**

- զինվորական պատրաստության հիմունքների վերաբերյալ գիտելիքների խորացումն ու համակարգումը,
- մարտական և այլ արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ կարողությունների ձեռքբերում և հմտությունների զարգացում, գիտելիքների յուրացում և ոլորտի տարբեր կողմերի վերաբերյալ ընդհանուր պատկերացումների ձևավորում,
- հայրենիքի պաշտպանության գործին անվերապահ պատրաստակամության ձևավորում,
- հայրենիքի պաշտպանությանը միտված՝ սովորողների մասնագիտական կողմնորոշում (ռազմական, ռազմատեխնիկական,

ռազմաարդյունաբերական, տեղեկատվական անվտանգության, ռազմական բժշկության, արտակարգ իրավիճակներ):

- լեռնային պատրաստության հիմունքերի ծանոթացում
- ստեղծագործական ունակությունների, ռազմագիտական երևույթները բացատրելու և տարբեր բնագավառներում կիրառելու, սեփական գործունեության հետևանքները կանխատեսելու կարողությունների և հմտությունների զարգացումը,
- կրթությունը ռազմական ուղղությամբ շարունակելու համար անհրաժեշտ հիմքերի ապահովումը

## 2. ԱՌԱՐԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ռազմական գործը և զինվորական պատրաստությունը մարդկության պատմության ձևավորման հետ միասին սկսել է գոյություն ունենալ, իսկ «Նախնական զինվորական պատրաստություն»-ը, որպես առարկա մեր իրականաության մեջ կյանքի է կոչվել 20-րդ դարի սկզբներին: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան հնարավորություն է տալիս ձևավորելու մտածող, քաջ և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի:

Հանրակրթական դպրոցում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ծրագիրը կառուցվում է հիմնարար գաղափարների հենքի վրա պարուրաձև սկզբունքով՝ հիմնական դպրոցում սատացած գիտելիքները ընդլայնվում և խորացվում է ավագ դպրոցում: Հիմնարար գաղափարների շուրջ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի կառուցումը հնարավորություն է ընձեռում արդյունավետ ապահովելու ներառարկայական և միջառարկայական կապերը՝ նպաստելով զինվորական պատրաստության, առաջին օգնության և անվտանգ կենսագործունեության հիմունքերի վերաբերյալ համակարգային պատկերացումների ձևավորմանը:

## 3. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

### 3.1. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

| | |
|---|---|
| 1. Ռազմարվեստի պատմություն: ՀՀ Զինված ուժեր | Պատկերացում ունեն «Ռազմարվեստ» հասկացության մասին: Գիտեն հին դարերում հայկական բանակի կառուցվածք, հայկական և հին աշխարհի հայտնի զորավարների կիրառած մարտավարական հնարքները: Կարող են նկարագրել ՀՀ ԶՈՒ հիմնական գործառույթները, նրա առանձին զորատեսակները և դրանց ստորաբաժանումները: |
| 2. Մարտավարության հիմունքներ | Կարող են ձևավորել (փորել) զինվորի անհատական խրամատ: Կարող են ներկայացնել խրամատի հողապատնեշի կառուցապատման և քողարկման պահանջները, դրա իրականացման ձևերն ու միջոցները: |
| 3. Մարտավարական-ֆիզիկական պատրաստություն | Ունի տարրական կարողություններ և հմտություններ հրաձության տարրերից (դիրքավորում, դիրքերի փոփոխում, տեղաշարժ): Կարողանում են սպորտային ներքնակի վրա կատարել գլորումներ (գլորվել դեպի առաջ, աջ և ձախ), սողեսող տեղաշարժ: Գիտեն մարտավարական անհատական հիմնական հատկանիշները, ձևերն ու միջոցները (քողարկում, ըստ քողարկման հատկանիշների քողարկվածին գտնելը): Գիտեն մարտական պայմաններում ինքնաձիգը կրելու առանձնահատկությունները և տիրապետում են դրա հիմնական ձևերին: Կարողանում են ինքնաբերաբար փոխել հրաձգության սեկտորը կանգնած և ծնկած դիրքավորման ժամանակ տարբեր ուղղություններով՝ կախված հրահանգչի (զինղեկի) հրահանգից: |
| 4. Կրակային պատրաստություն | Գիտեն փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանի կառուցվածքը, դրա մեխանիզմի աշխատանքը, նշան բռնելու տեխնիկան: Կարող են պառկած դիրքավորմամբ ֆիքսել փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանը և նշանառու կրակ վարել (նորմեր): Գիտեն ՀՀ ԶՈւ-ում կիրառվող հրաձգային զենքի հիմնական տեսակները՝ տալով դրանց նշանակությունը: Գիտեն АКМ (АК-74) ինքնաձիգի մասերի ու մեխանիզմների նշանակությունն ու աշխատանքը, |

| | |
|---|---|
| | պիպանման և անվտանգության կանոնները: Կարող են ըստ նորմատիվների ինքնաձիգը ոչ լրիվ քանդել-հավաքել: Գիտեն են կրակոցի երևույթը և պատսպարված, խոցելի և «մեռյալ» տեղամասերը: Որոշակի տիրապետում են նշանառության միատեսակության ապահովման հմտություններին: |
| 5. Ռազմական տեղագրության հիմունքներ | Գիտեն տեղանքի տարատեսակները և դրանց մարտավարական հատկանիշները, հորիզոնի կողմերի որոշման նշանակությունը: Կարող են հորիզոնի կողմերը որոշել կողմնացույցի օգնությամբ, երկնային լուսատուներով, տեղանքի բնական միջոցներով և բնության այլ երևույթներով: Գիտեն տեղագրական քարտեզը ըստ կոնկրետ մասշտաբների: Կարողանում են առանձնացնել բնական և արհեստական առարկաների պայմանական նշանները և տեղանքում կողմնորոշել տեղագրական քարտեզը: Գիտեն ինչ է կողմնորոշիչ, ինչ է ազիմուտ (մագնիսկան ազիմուտ): Կարող են որոշել տեղանքի կոնկրետ առարկայի մագնիսկան ազիմուտը կողմնացույցով (սմարթֆոնով): Կարող են որոշել տեղանքի առարկայից եղած հեռավորությունը տարբեր եղանակներով (կուրվիմետրով և կարկինով չափել տեղագրական քարտեզի վրա, չափել մաթեմատիկական մեթոդներով, հազարերորդականի բանաձևով, աչքաչափով, կարող են չափել անցած հեռավորությունը զույգ քայլերի օգնությամբ): Կարող են կազմել տեղանքում տեղաշարժի երթուղու սխեման ըստ շրջադարձային կողմնորոշիչների, դրանց մագնիսական ազիմուտների և եղած հեռավորությունների, տեղաշարժվել դրանցով՝ ընտրելով նաև միջանկյալ կողմնորոշիչներ: |
| 6. Իրավական պատրաստություն | Գիտեն կարգապահության դերը ՀՀ ԶՈւ-ում: Պատկերացում ունեն ՀՀ ԶՈՒ տարբերանշաններից: Գիտեն զինվորական կոչումները: Կարող են բացատրել, թե ինչ է մարդասիրությունը, կարեկցանքը, խիղճը և ինչպես պետք է դրանք դրսևորվեն պատերազմների ժամանակ: Գիտեն, որ միջազգային իրավունքի խախտման հետևանքերը Կարողանում են տարբերել պետեր-ենթականեր, ավագներ-կրտսերներ ըստ պաշտոնների և կոչումների: Գիտեն ի՞նչ է հրամանը և ի՞նչ է կարգադրությունը: Գիտեն, որ պատերազմի դաշտում բժիշկները, հոգևորականները, միջազգային մարդասիրական կառույցների ներկայացուցիչները պաշտպանված եմ միջազգային իրավունքի նորմերով և դրանց խախտումը կարող է բերել իրավական հետևանքների: |
| 7. Շարային պատրաստություն | Գիտեն շարքի տեսակները, և դրա բաղկացուցիչ տարրերը: Ծանոթ են շարային հրամաններին և կարողանում են դրանց համապատասխան արձագանքել: Կարողանում են զինվորական ողջույնին պատասխանել շարքում: |

| | |
|---|---|
| | Տիրապետում են շարային վարժանքներին (ընդունել շարային կեցվածք, կատարել շարային քայլ, դարձումներ տեղում և շարժման ժամանակ: Գիտեն ինչ է հասարակական գիտակցությունը, արժեքները, վարքականոնը, օրինակելի անձը: Ունեն իրենց նախընտրություններն այստեղ: Գիտեն հայ զինվորականի վարքականոնը: |
| 9. Անվտանգ կենսագործունեություն և կենսապահովում | Գիտեն վտանգավոր երևույթները և կարող են նկարագրել դրանք: Ծանոթ են վտանգավոր երևույթների ազդեցություններին և հետևանքներին: Գիտեն արտակարգ իրավիճակները և դրանց տեսակներ կանխման, դրանց ազդեցության մեղմացման կամ հետևանքների վերացման միջոցառումները: Ծանոթ են բնածին արտակարգ իրավիճակների ժամանակ հնարավոր վտանգներին: Կարող են՝ արտակարգ իրավիճակում փոքրացնել մարմնի ջերմության կորուստները, ստանալ կրակ և պահպանել այն: Գիտեն բնածին արտակարգ իրավիճակներում վարքի կանոնները: Գիտեն հակահրդեհային անվտանգության կանոնները և կարող են իրականացնել համապատասխան միջոցառումներ: Տիրապետում են կոմունալ կենցաղային համակարգում տեխնածին արտակարգ իրավիճակներում վարքի կանոններին և կարող են ներկայացնել դրանք: Կարող են արտակարգ իրավիճակում կանխել ջրազրկումը, պլանավորել ջրի անհրաժեշտ ծախսը: Կարող են տեղանքում ջուր հայթհայթել, ֆիլտրել, տարբեր ձևերով մանրէազերծել: Տիրապետում են խմելու ջրի և հիգիենայի համար անհրաժեշտ նորմատիվային չափերին: |
| 10. Առաջին օգնության հիմունքներ | Ներկայացնել առաջին օգնության նպատակները, խնդիրներն ու յուրահատկությունները: Գնահատել դեպքի վայրը: Հայտնաբերել տուժածին առաջին օգնության ցուցաբերմանը խանգարող հանգամանքները և որոշել դրանց հաղթահարման ուղիները: Իրականացնել տուժածների առաջնային և երկրորդային զննումը, վիճակի գնահատումը, առաջին օգնության ցուցաբերումը, տեսակավորումը և տեղափոխումը: Որոշել տուժածների տեղափոխման առաջնահերթությունը և հերթականությունը: Կարող են նկարագրել սուր-վարակիչ հիվանդությունները: Գիտեն դաշտային պայմաններում վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու նպատակով կիրառվող սանիտարահիգենիկ կանոնները: Պարզագույն իրավիճակներում կարող են ցուցաբերել առաջին օգնություն: Գիտեն վիրակապման տեսակները: Ստանդարտ և հանպատրաստից սարքած վիրակապական նյութերի տեսակները: Վիրակապման նպատակները և հիմնական սկզբունքները: Վիրակապերի տեսակները և տեղադրման կանոնները: Կարողանալ գնահատել օրգանիզմի կենսագործունեությունը (“CAB”): Համեմատել գիտակցության մակարդակները: Գնահատել տուժածի գիտակցության վիճակը և խանգարման |

| | |
|---|---|
| | ձևերը: Անգիտակից տուժածին բերել կողքային անվտանգ դիրքի՝ ԿԱԴ-ի: Կարողանալ տարբերակել սահմանային վիճակի փուլերը, ախտանիշները: Հստակ ախտորոշել կլինիկական մահը: Պարզել շնչառության կանգի պատճառները: Ապահովել շնչուղիների անցանելիությունը: Իրականացնել արհեստական շնչառություն («բերան-բերան», «բերան-քիթ» և այլ մեթոդներով): Կատարել կրծքային սեղմումներ և ներփչումներ: Իրականացնել ՍԹՎ մեկ և երկու հոգով: Գնահատել ՍԹՎ արդյունավետությունը:<br><br>Կարողանալ ճանաչել շնչառության սուր խանգարումների նշանները, ելնելով տուժածի ինքնազգացողությունից, շնչառությունից, մաշկից և այլն: Կատարել տուժածների զննումը շնչառական համակարգի սուր խանգարումների դեպքում, արագ կողմնորոշվել տուժածի վիճակում և ցուցաբերել առաջին օգնություն: Ճանաչել մասնակի և լրիվ խցանման նշանները: Օտար մարմնով խցանված շնչուղիներով տուժածին (տարբեր տարիքային խմբերի) ցուցաբերել առաջին օգնություն: |

## 3.2. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԾՐԱԳՐԻ «ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

| | |
|---|---|
| 1. Ռազմարվեստի պատմություն:<br>ՀՀ Զինված ուժեր | Կարող են նկարագրել 17-րդ դարում Սյունիքի ազատագրական պայքարում Դավիթ բեկի և նրա զինակիցների ռազմավարությանն ու մարտավարությանը: Կարող են նկարագրել ֆիդայիների պարտիզանական գործողությունների ռազմավարությանը: Գիտեն, թե ինչ նոր զինատեսակներ են ստեղծվել և կիրառվել 1-ին աշխարհամարտի ժամանակ և ինչպես դրանք ազդել մարտավարության վրա: Կարող են ներկայացնել Կովկասյան ճակատում և Մերձավոր Արևելքում հայ կամավորների սխրանքները: Գիտեն անկախության համար Հայաստանի առաջին հանրապետության բանակի դերին՝ Մայիսյան հերոսամարտի օրերին: Կարող են նկարագրել Լեռնահայաստանի համար պայքարում Գարեգին Նժդեհի կիրառած մարտավարություն: |

| | |
|---|---|
| | Գիտեն, թե ինչ  նոր զինատեսակներ են կիրառվել  II աշխարհամարտում և, դրա հետ կապված, ինչ նոր ռազմավարություն և մարտավարություն է կիրառվել: Պատկերացում ունեն «Սառը» պատերազմի, որպես միջազգային հակամարտություններում անուղղակի գործողությունների ռազմավարության հետ: Գիտեն Արցախի ազատագրման համար հայ ժողովուրդի պայքարի կարևոր հանգամանքները, ծանոթ են Շուշիի ազատագրման օպերացիային: Կարող են ներկայացնել 2016 թ. Ապրիլյան ռազմական գործողությունների առանձնահատկությունները և նկարագրել Արցախի դիրքապահների հերոսական գործողությունները:<br><br>Պատկերացում են կազմում  զինվորական երդման գաղափարի զինվորական երդում տալու կարգի և ձևի մասին: Սովորում են զինվորական երդման տեքստը և երդում տալու կարգը:<br><br>Պատկերացում ունեն ՀՀ ԶՈՒ կադրերի պատրաստման համակարգի, զինվորական մասնագիտությունների վերաբերյալ: |
| 2. Մարտավարության հիմունքներ | Կարողանում են ընտրել կրակային կամ դիտարկման դիրքը և դիրքավորվել, քողարկվել, դիտարկել հակառակորդին:<br>Կարողանում են տեղաշարժվել մարտի դաշտում կամ դետքի կազմում, այդ թվում՝ քողարկված:<br><br>Կարողանում են մարտական իրավիճակում հմտորեն, արագ փոխել կրակային դիրքը, քողարկված տեղաշարժվել՝ ապահովելով սեփական անվտանգությունը և մարտական առաջադրանքի հաջող կատարումը:<br>Կարողանում են հրաձգության մի կայուն դիրքավորումից հմտորեն անցնել մյուսին՝ կախված մարտական իրավիճակից:<br><br>Պատկերացում ունեն ժամանակակից համազորային մարտի մասին: Կարող են ցուցադրել ջոկի երթակարգը, նախամարտական և մարտական կարգը: Կարող են ցուցադրել ջոկի գործողությունները հարձակման և ներկայացնել այն պաշտպանության ժամանակ:<br><br>Պատկերացում են կազմում հակառակորդի զրահատեխնիկայի նկարագրերի, պարամետրերի, առանձնահատկությունների, դրանց թույլ կողմերի մասին: Կարող են թվարկել ՄՀՋ հակատանկային միջոցները: |

| | |
|---|---|
| | Կարող են թվարկել հակառակորդի օդային հարձակման միջոցների դեմ պայքարի ՄՀՋ հնարավորությունները: Գիտեն դրանց դեմ հրաձգային կրակի հեռավորության և առաջանցիկ նշանառության մասին:<br><br>Գիտենալ հակառակորդի դիպուկահարների դիպուկահարների, դիվերսիոն հետախուզական խմբերի և մոբիլ ջոկատների դեմ պայքարի ձևերն ու հնարները: |
| 3. Մարտավարական-ֆիզիկական պատրաստություն | |
| 4. Կրակային պատրաստություն | Տիրապետում են հրաձգության կանոններին: Գիտեն ստուգել և վերացնել ինքնաձիգի խափանումները տեղում: Գիտեն փամփշտատուփում վերջին փամփուշտի մնալը ահազանգելու ձևը և կարող են արագ փոփոխել այն՝ առանց ինքնաձիգը վերալիցքավորելու: Գիտեն ձեռքի բեկորային Ф-1, РГД-5, Ջ-1 նռնակների յուրաքանչյուրի նշանակությունը, ծանոթ են դրանց իրանի և բոցավառիչի ներքին կառուցվածքին և աշխատանքնին, կարող են ներկայացնել դրանց մարտավարական-տեխնիկական պարամետրերը, կարող են ցուցադրել դրանց անվտանգության 5 մակարդակները: Կարողանում են տեղում կանգնած դրությունից ձեռքի ուսումնական բեկորային նռնակը ճիշտ նետել:<br>Կարողանալ տարբերել դիվերսիոն հետախուզական խմբերի հնարավորությունները և մոբիլ ջոկատների ունեցած հնարավորություններից: Գիտեն հաշվարկել АКМ, АК-74 ինքնաձիգներից նշանառության ճշգրտումները հակառակորդի տեղաշարժի և կողային քամու դեպքում:Կարող են որոշել նշանակետի հեռավորությունը, ինչպես նաև քամու շարժման արագությունն ու ուղղությունը:<br><br>**Տունգուսկա, ՏՈՐ-Մ2, ԲՈՒԿ** հակաօդային պաշտպանության զենիթահրթիռային համալիրների հնարավորությունների մասին: **ՍՄԵՐՉ, ՏՈՍ-1Ա համազարկային հրետանային համակարգերի հնարավորությունների մասին: ՏՈՉԿԱ-ՈՒ, ԻԿԱՆԴԵՐ- Է, օպերատիվ մարտավարական հրթիռային և Ս-300 համազարկային հրետանային համակարգերի մասին:** |

| | |
|---|---|
| 5.Ինժեներական պատրաստություն | Կարող են տարբերել հակահետևակային ПМН-1, ПМН-2, МОН-50, հակատանկային ТМ57 (ТМ-62) ականները, գիտի դրանց նշանակությունը, մարտավարական-տեխնիկական պարամետրերը, գիտի դրանց հետ վարվելու անվտանգության կանոնները: Օրինակներով վրա կարող են նկարագրել «ծուղակ-ականներից» բխող վտանգները: Գիտեն ինժեներական արգելափակոցների, ականադաշտերի նշանակությունը առաջնագծի պաշտպանության համար: Կարող են նկարագրել ականադաշտերի նախազգուշացման նշանները:<br><br>Կարողանում են հմտորեն բացազատվել շղթայի և նորից արագ վերադասավորվել շարասյան: Գիտեն РПК ձեռքի գնդացրի, ПК գնդացրի և СВД դիպուկահար հրացանի նշանակությանը, հիմնական մարտավարական-տեխնիկական պարամետրերը, Կարող են ներկայացնել դրանց ընդհանուր կառուցվածքը, գործածության առանձնահատկությունները: Գիտեն РПГ-7 հակատանկային նռնականետի նշանակությունը, կառուցվածքը, գործողության սկզբունքը:<br><br>Կարողանում են ըստ նորմատիվների, տարբեր դիրքավորումներից, ձեռքի ուսումնական բեկորային նռնակները նետել ըստ հեռահարության և ճշգրտության: Տիրապետում են ձեռքի բեկորային նռնակի կիրառման անվտանգության կանոններին:<br>Գիտեն խրամատի, խրամուղու, խրամախորշի նշանակությունը, տեղյակ են դրանց կառուցվածքին, հուսալիության և քողարկման խնդիրներին:<br><br>Կարող են ներկայացնել տարածքի ականապատման նախանշանները: Գիտեն վարքի կանոնները՝ ինչպես գործել պատերազմից մնացախ չպայթած զինամթերք հայտնաբերելու դեպքում: |
| 5. Ռազմական տեղագրության հիմունքներ | Գիտեն ինչ է տեղագրական քարտեզի կոորդինատային և կիլոմետրային ցանցը, ինչ է ուղղորդված անկյունը: Ուղղորդված անկյան օգնությամբ կարողանում են տեղագրական քարտեզի տվյալ կետում որոշել դեպի կոնկրետ առարկան եղած ուղղությունը:<br>Կարողանում են տեղագրական քարտեզի վրա որոշել սեփական տեղադիրքը ըստ տրված կոորդինատների, ըստ մի գծի վրա չգտնվող կողմնորոշիչների, GPS տեղորոշման սարքով:<br>Կարողանում են տեղագրական քարտեզի օգնությամբ կամ արտաքին դիտարկմամբ ու մոտավոր չափումներով կազմել կրակի քարտ՝ տեղանքի կարևորագույն առարկաների (կողմնորոշիչների) դիրքերի նշումներով, անվանումներով և հեռավորություններով, բարձրություններով: |

| | |
|---|---|
| | Գիտենա հեռավորությունների չափման մեթոդները: Կարողանա կատարել հեռավորության չափումներ տեղանքում առկա մեթոդներով:<br><br>Գիտենա Գետի լայնության, ծանծաղուտների խորության և առարկաների բարձրությունների որոշման հնարները,<br>Կարողանա՝ կատարել գետերի լայնությունների, ծանծաղուտների խորությունների և առարկաների բարձրությունների որոշում եղած մեթոդներով: |
| 6. Իրավական պատրաստություն | Գիտեն ի՞նչ է պատասխանատվությունը և ինչ պատասխանատվություն է սպասվում զինծառայողին պետերի հրամանը չկատարելու (ոչ պատշաճ կատարելու) դեպքում:<br>Կարող են ընդհանուր գծերով նկարագրել հակառակորդի քաղաքացիական բնակչության և ռազմագերիների իրավունքները, գիտեն դրանց խախտման դեպքում սպասվող իրավական հետևանքների մասին:<br>Գիտեն ինչ է օրվա վերակարգը, ժամապահի պարտականությունները, նրա անձեռնամխելիությունը: Գիտեն զենքի լիցքավորման և լիցքաթափման կարգը:<br>Պատկերացում ունեն զինված ընդհարումների ընթացքում մարտական գործողությունների վարման արգելված եղանակների ու և միջոցների, դրանց խախտման համար սպասվող իրավական հետևանքների մասին:<br>Պատկերացնում են բանակային կարգ ու կանոնը: Կարող են թվարկել զինծառայողների հիմնական իրավունքներն ու պարտականությունները: |
| 7.Լեռնային-հատուկ պատրաստության հիմունքներ | Գիտեն ինչ է տեղագրական քարտեզի կոորդինատային և կիլոմետրային ցանցը, ինչ է ուղղորդված անկյունը: Ուղղորդված անկյան օգնությամբ կարողանում են տեղագրական քարտեզի տվյալ կետում որոշել դեպի կոնկրետ առարկան եղած ուղղությունը:<br>Կարող են թվարկել բարդ լեռնային տեղանքում ինքնապահովման և փոխադարձ ապահովման միջոցներն ու միջոցառումները: Կարող են անվտանգության ձևերի և պարզագույն միջոցների կիրառմամբ թեք տեղանքով բարձրանալ և իջնել, հաղթահարել ձյունապատ (սառցապատ) տեղանքը:<br>Գիտենա արդյունաբերական ալպինիզմի ժամանակ կիրառվող հնարները, փրկարարական աշխատանքների ժամանակ կատարման ժամանակ կիրառվող հանդերձանքի ձևերն ու առավելությունները, հանգույցների տեսակները: |

| | |
|---|---|
| | Կարողանա պատրաստել հանգույցներ, կիրառել արդյունաբերական ալպինիզմի պարզագույն հնարները:<br><br>Գիտեն դիտարկման և հրաձգության վայրին ներկայացվող պահանջները: Որոշակի տիրապետում են թեք տարածքներում հրաձգության հիմնական դիրքավորումներին և դրանց անցումներին: Գիտեն բարձր-լեռնային տեղանքում հրաձգության առանձնահատկությունները: |
| 7. Շարային պատրաստություն | Կարողանում են շարային կանոնադրության համաձայն զինվորական ողջույնը տալը տեղում և շարժման ընթացքում:<br>Կարողանում են շարային կանոնադրության համաձայն զինվորական պատիվ տալը հրամանատարին (ավագին)՝ զենք կրելու պարագայում: |
| Կապ և տեղեկատվական անվտանգություն | Կարող է ներկայացնել կապի կարևորությունը ժամանակակից մարտում, թվարկել կապի և հեռահաղորդակցության ձևերն ու միջոցները:<br><br>Կարող են ներկայացնել ՀՀ ԶՈՒ-ում տեղեկատվական անվտանգության հետ կապված հիմնախնդիրը, ռազմական ոլորտի պետական ու ծառայողական գաղտնիքների հնարավոր արտահոսքի վտանգը, դրա դեմ պայքարի ձևերը, եղանակներն ու միջոցները: |
| 8. Հոգեբանական պատրաստություն | Պատկերցնում են զգուշության, զգոնության, ուշադրության կարևորությունը առաջավոր գծում, մարտական հերթապահության ժամանակ, այլ արտակարգ իրավիճակներում:<br>Պատկերացնում են հոգեբանական կայունության դերը մարտում, այլ արտակարգ իրավիճակներում: Տիրապետում են հոգեբանական կայունության հասնելու առանձին ձևերի:<br>Պատկերացնում են, թե ինչ է տեղեկատվական-հոգեբանական պայքարը և հոգեբանական պատերազմը: Կարող են թվարկել հոգեբանական ներգործության և հոգեբանական պաշտպանության կարևորագույն տեսակներ, մեթոդներ ու ձևեր: |
| 9. Անվտանգ կենսագործունեություն և կենսապահովում | Գիտեն հատուկ օբյեկտներում ծագած տեխնածին արտակարգ իրավիճակներում վարքի կանոնները: Պատկերացնում են զանգվածային և ոչ ընտրողական ոչնչացման զինմիջոցների գործադրման դեպքում առաջ եկած սպառնալիքները և գիտեն պաշտպանության ձևերը:<br>Կարող են արտակարգ իրավիճակում ձևավորել և քողարկել բնակատեղին: |

| | |
|---|---|
| | Գիտեն արտակարգ իրավիճակում ազդարարման ազդանշանները: Գիտեն ինչպես գործել արտակարգ իրավիճակներում, իրականացնել տարհանում: Գիտեն անհատական և կոլեկտիվ պաշտպանության ձևերն ու եղանակները, կիրառվող միջոցները: Գիտեն ռմբապաստարանի տեղը դպրոցում և բնակության վայրում: Պատկերացում ունեն բնակչության պաշտպանության պետական միասնական համակարգի մասին:<br><br>Ճանաչում են ուտելու համար պիտանի և բուժիչ հատապտուղները, խոտաբույսերը, արմատապտուղները, սնկերը, կարող են դրանք պատրաստել սննդի և բուժական նպատակներով: Գիտեն սննդի անվտանգության և սնուցման նվազագույն չափորոշիչները:<br><br>Պատկերացնում են ռիսկերի գնահատման մեխանիզմները: Գիտեն խոցելիության նվազեցման հիմնական ուղիները և տարաբնույթ վտանգների ազդեցության առանձնահատկությունները: |
| 10. Առաջին օգնության հիմունքներ | Իրականացնել տուժածների զննումը, վնասվածքների ախտորոշումը, տեսակավորումը և առաջին օգնության ցուցաբերումը, տուժածների տարահանումը և տեղափոխումը: Կազմակերպել առաջին օգնությունը տարբեր վերքերի դեպքում: Իրականացնել վնասված հյուսվածքի առաջնային մշակումը:<br>Կատարել (գլխի, գանգուղեղի, կրծքավանդակի, որովայնի, փափուկ հյուսվածքների, աչքի )գլխի, դիմա-ծնոտային և պարանոցի վնասվածքով տուժածի զննումը և վնասվածքների ախտորոշումը, առաջին օգնության ցուցաբերումը, տուժածների տարահանումը և տեղափոխումը:<br>Իրականացնել տարբեր մարմնամասերում առկա օտար մարմնի անշարժացումը ձեռքի տակ եղած միջոցներով:<br>Իրականացնել տուժածների զննումը, արագ որոշել արյունահոսության տեսակը, առաջացման պատճառը, ծանրության աստիճանը: Հաշվառել արյան մոտավոր կորուստը տարբեր վնասվածքների դեպքում: Ցուցաբերել անհետաձգելի բուժօգնություն արյունահոսությունների ժամանակ:<br>Տիրապետել արտաքին արյունահոսությունների ժամանակավոր դադարեցմանը ձեռքի տակ եղած և հաշվեցուցակային միջոցներով (ճնշող վիրակապ, առավելագույն տարածում և ծալում, սեղման կետեր, լարան, ոլորան և այլն):<br>Կարողանալ՝<br>Արագ կողմնորոշվել ներքին արյունահոսության դեպքում և ցուցաբերել առաջին օգնության:Որոշել քթային արյունահոսության տեսակը և ցուցաբերել առաջին օգնության: |

| | |
|---|---|
| | Տեսակավորել և տարահանել արյունահոսություններով տուժածներին: Իրականացնել արյունահոսություններով տուժածների խնամքը: Շոկ, տեսակները, առաջացման պատճառները և ցուցաբերվող բուժօգնությունը:<br>Տարբերակել շոկերը, ճանաչել նշանները, և ընտրել առաջին օգնության ցուցաբերման հերթականությունը, ելնելով հայտնաբերած վնասվածքներից և տուժածի ծանրության աստիճանից: Շոկային վիճակում գտնվող տուժածներին տեսակավորել և ցուցաբերել առաջին օգնություն: Որոշել վնասվածքային շոկի ծանրության աստիճանը: Տեսակավորել և տարահանել վնասվածքային շոկով տուժածներին: Կազմակերպել վնասվածքային շոկով տուժածների առաջին օգնությունը: Իրականացնել վնասվածքային շոկով տուժածների խնամքը:<br><br>Իրականացնել անհետաձգելի օգնություն կենցաղային թունավորումների, օձերի և թունավոր միջատների խայթոցների դեպքում:<br><br><br>Ճանաչել հենաշարժիչ համակարգի վնասվածքները: Իմանալ հենաշարժիչ համակարգի վնասվածքների ընդհանուր նշանները: Իմանալ անշարժացման հիմնական սկզբունքները բեկակալների կամ այլ միջոցների օգնությամբ: Կատարել տուժածների զննումը, արագ կողմնորոշվել տուժածի վիճակում, որոշել ծանրության աստիճանը և ուղեկցող գործոնների ներդրումը, տեսակավորումը, ցուցաբերել առաջին օգնություն:<br>Կարողանալ՝<br>Օրգանիզմի ընդհանուր գերտաքացում, (ջերմահարում), արևային հարված: Արագ կողմնորոշվել գերտաքացման ենթարկված տուժածների առկայության դեպքում: Ցուցաբերել առաջին օգնություն օրգանիզմի գերտաքացման ժամանակ:<br><br>Այրվածքներ<br>Դասակարգել այրվածքները ՝ըստ այրվածք առաջացնող գործոնի և աստիճանի: Կարողանալ արագ կողմնորոշվել տուժածների վիճակում և որոշել այրվածքի ծանրության աստիճանը, այրվածքի մակերեսի չափը, շոկածին և ոչ շոկածին տուժածներին: Իրականացնել այրվածքներով տուժածների տեսակավորումը, ցուցաբերել առաջին օգնություն աղետի օջախում, և տեղափոխման ընթացքում: Իրականացնել այրվածքներով տուժածների խնամքը:<br><br>Քիմիական նյութերից առաջացած այրվածքներ:Դասակարգել քիմիական այրվածքները ՝ըստ այրվածք առաջացնող նյութի: Կարողանալ արագ կողմնորոշվել տուժածների վիճակում և որոշել քիմիական այրվածքի ծանրության աստիճանը: Իրականացնել այրվածքներով տուժածների |

| | |
|---|---|
| | տեսակավորումը, ցուցաբերել առաջին օգնություն աղետի օջախում, և տեղափոխման ընթացքում: Իրականացնել քիմիական այրվածքներով տուժածների խնամքը:<br><br>Օրգանիզմի ընդհանուր գերսառեցում:<br>Արագ կողմնորոշվել գերսառեցման ենթարկված տուժածների վիճակում: Ցուցաբերել առաջին օգնություն օրգանիզմի գերսառեցման ժամանակ:<br><br>Ցրտահարություն:<br>Որոշել ցրտահարության աստիճանները: Տեսակավորել, ցուցաբերել առաջին օգնություն և տարահանել ցրտահարություններով տուժածներին: Իրականացնել ցրտահարություններով տուժածների խնամքը<br><br>Հոսանքահարում: Կայծակնահարում:<br>Տեսակավորել, ցուցաբերել առաջին օգնություն և տարահանել հոսանքահարված և կայծակնահարված տուժածներին:<br><br>Ջրահեղձում:<br>Տիրապետել ինքնուրույն փրկվելու ¨ տուժածին փրկելու հմտություններին:<br>Ցուցաբերել առաջին օգնություն ջրահեղձման դեպքում: Որոշել մահվան տեսակը ջրահեղձման ժամանակ:<br><br>Օգտագործել շրջապատում գտնվող առարկաները առաջին օգնության ցուցաբերման ժամանակ (ըստ վնասվածքների):<br><br>ճիշտ է ներկայացնում տուժածին անվտանգ տեղափոխման եղանակները և միջոցները: Կատարել տուժածների տեղաշարժումը, շտապ դուրսբերումը և տեղափոխումը, որոշել տարահանման ձևը, ելնելով առկա վնասվածքներից: Ընտրել անհրաժեշտ գույքը և մարդկանց քանակը:<br><br>Ճիշտ է ներկայացնում տուժածին անվտանգ տեղափոխման եղանակները պատգարակներով: Կատարել տուժածների պատգարակումը և տեղափոխումը, ելնելով առկա վնասվածքներից: |

| | |
|---|---|
| | Ընտրել անհրաժեշտ գույքը և մարդկանց քանակը: Ձեռքի տակ եղած միջոցներով կարողանում է պատգարակներ պատրաստել:<br><br>Ցուցաբերել հարձակման ժամանակակից զենքերից առաջացող վնասվածքներով տուժածներին առաջին բուժօգնություն՝ հաշվի առնելով կիրառված զենքի յուրահատկությունները: Կարողանալ արագ ախտորոշել նման զենքերից առաջացած բազմակի, զուգակցված և համակցված (կոմբինացված) վնասվածքներով տուժածներին և արագ ցուցաբերել առաջին բուժօգնություն ըստ նրանց առանձնահատկությունների: |

## 1. ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Սույն ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել «Հանրակրթության մասին», «Պաշտպանության մասին», «Զինապարտության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքները, ինչպես նաև՝ «Հանրակրթական պետական կրթակարգը», «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը»:

«Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկայի նոր ուսումնական ծրագրում կատարված որակական փոփոխությունները պայմանավորված են ինչպես ռազմագիտության ոլորտում վերջին տասնամյակում տեղի ունեցած փոփոխություններով և իրավիճակային զարգացումներով, այնպես էլ ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման ձևով՝ օգտագործելով ուսուցման սպիրալաձև և վեկտորային մոտեցումները, շարժվելով անհատական պատրաստվածությունից խմբային (ջոկային) պատրաստվածության: Այստեղ առաջնային է ուսուցումը գործնական հիմքերի վրա դնելը, մարտական իրադրությունում և արտակարգ այլ իրավիճակներում անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձեռքբերումը, աստիճանաբար հիմնային որակների ձևավորումից գործնական վարժանքներում դրանց կիրառումը: Կարևորվում է նաև միջառարկայական կապերի զարգացումը և ուսուցողական նյութերի պարզեցումը, ոչ պրոֆիլային թեմաներից ազատումը և արդիական ու կարևոր թեմաների ներմուծումը, ավելի արդյունավետ մեթոդական մոտեցումների, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառումը:

Առաջադրվող ուսումնական ծրագիրը երկու հիմնական ուղղվածություն ունի՝ մասնագիտական հիմունքների ուսուցում և

դաստիարակություն: Այն մեծապես համապատասխանում է մանկավարժական գիտության հիմնարար սկզբունքներին՝ օբյեկտիվություն, ուսուցման համակարգվածություն և հաջորդականություն, դիտողականություն և մատչելիություն, գործնական ուղղվածություն, գիտելիքների յուրացում՝ հմտությունների և կարողությունների ձևավորման ձևով, հասարակական գիտակցության աճ (արժեհամակարգ, ներքին հասարակական դիրքորոշումներ, վարքագիծ), ուսուցանվողների ակտիվություն (ներքին շարժառիթների ձևավորում և ուսուցման խթանում), առարկայի և ոլորտի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում և մասնագիտական կողմնորոշում:

Սույն ծրագիրն ապահովում է հանրակրթության պետական կրթակարգով հաստատված 12-ամյա միջնակարգ կրթության սահմաններում և այլընտրանքային հայեցակարգով աշխատող դպրոցներում իրականացվող ՆԶՊ առարկայական ծրագրի բովանդակային պարտադիր միջուկը, ուսումնական գործունեության տեսակները, հայեցակարգը, նպատակն ու խնդիրները:

Բացի դպրոցական ծրագրով առանձնացված ժամաքանակով դասերից՝ ենթադրվում է արտադասարանական խմբակների ստեղծում, իրականին մոտ պայմաններում անհատական և խմբային գործնական կարողությունների զարգացման համար՝ լրացուցիչ ճամբարային պատրաստություն, տեղական, մարզային, համապետական մրցույթների և ռազմամարզական խաղերի անցկացում:

ՆԶՊ ուսումնական առարկայի ծրագրի գործնական թեմաներով նախատեսված վարժանքները, առանձին թեմաները և դրանց մատուցման ձևերը ենթակա են շարունակական կատարելագործման:

Այս փաստաթուղթը կարող է հիմք հանդիսանալ ՆԶՊ ուսումնական ծրագրերի, դասագրքերի, մեթոդական, օժանդակ ուսումնական ձեռնարկների, տեսադասերի ստեղծման համար:

## 5. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվի առնելով արդի ժամանակներում միջազգային և տարածաշրջանային զարգացումները և, դրա հետ կապված, այս առարկայի կարևորությունը, ինչպես և ստացած գիտելիքների՝ զինծառայության ընթացքում գործնական կիրառման հնարավորությունը՝ անհրաժեշտ է ուսուցման գործընթացի արդյունավետ համակարգի կիրառում ինչպես մեթոդաբանության, այնպես էլ ժամանակակից տեխնոլոգիաների (ուսուցողական նյութի դիտարժան ներկայացման տեխնիկական ու ծրագրային միջոցների) կիրառման տեսանկյունից: Որոշակիորեն կարող են կիրառվել ինչպես հարցադրումների միջոցով խնդիրների ներկայացումը, սովորողների մտածողության ակտիվացումը, նրանց մոտ հետաքրքրության առաջացումը կոնկրետ թեմայի և առարկայի վերաբերյալ, այնպես էլ սովորողների առանձին խմբերի միջև մրցակցության նախաձեռնումը, գիտելիքների ընկալման, յուրացման և ունակությունների դրսևորման ներքին շարժառիթների ստեղծումը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում գործնական

վարժանքներին, քանի որ մարտական իրավիճակում շատ կարևոր է զինվորի գործողությունների հղկումը՝ մինչև դրանց ինքնաբերաբար իրականացումը:

Պարապմունքների ձևի ընտրությունը կախված է դպրոցում առկա ուսումնական բազայից, նյութատեխնիկական ապահովվածությունից, դպրոցի տեղակայման վայրից (քաղաքային կամ գյուղական վայր), շեֆ-զորամասից եղած հեռավորությունից, օրվա և տարվա եղանակից, բնական միջավայրից (տեղանքից):

Այս առումով ՆԶՊ առարկայի դասավանդման ընթացքում նպատակահարմար է կիրառել ուսուցման գործընթացի մի շարք սկզբունքներ և տեսակներ:

***Ուսուցման գործընթացը պետք է դաստիարակող և զարգացնող բնույթ ունենա***: Այն ներառում է երկու տարբեր, սակայն փոխկապակցված գործոններ.

1. *ուսումնական նյութի յուրացման արդյունքն է*՝ մասնավորապես, հայրենասիրական թեմաների շնորհիվ ներքին շարժառիթների ձևավորումը, արհեստավարժության տարրերի յուրացման շնորհիվ ինքնավստահության առաջացումը և այլն,

2. *զինղեկի անմիջական ներգործության արդյունքն է: Շատ կարևոր է սովորողների գիտելիքների և կարողությունների արդարացի գնահատումը*: Առանձին իրավիճակներում զինղեկը կարող է կիրառել այնպիսի մեթոդներ, ինչպիսին են *տեղեկացումը, համոզումը, հոգեբանական կառուցողական ներգործությունը*:

*ՆԶՊ առարկայի դասավանդման ողջ ընթացքում ուսուցիչը և ուսուցման անցկացման մեջ ներգրավված ողջ մանկավարժական կոլեկտիվը սովորողների շրջանում պետք է ձևավորեն մի այնպիսի մթնոլորտ, որ ուսումնական գործընթացի նկատմամբ վերջիններս ցուցաբերեն բարձր գիտակցություն և դրսևորեն անհրաժեշտ ակտիվություն (ներքին դրդապատճառներ և գիտակցված կարգապահություն):*

ՆԶՊ առարկայի ուսուցումը, հայրենիքի ապագա պաշտպանի բազմակողմանի նախապատրաստումը պետք է մեծ կարևորություն ունենան սովորողի, վերջինիս ծնողների և, ընդհանրապես, հասարակության համար: Աշակերտների մոտ այս առթիվ ներքին դրդապատճառների ձևավորման համար անհրաժեշտ է նրանց շրջանում տանել ինչպես համապատասխան բացատրական աշխատանքներ, այնպես էլ կիրառել բարոյական և նյութական որոշակի խթաններ: Ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքում սովորողին պետք է ներշնչել այն հիմնական գաղափարը, որ ճգնաժամային իրավիճակում ՆԶՊ առարկայից ստացած գիտելիքներն ու կարողությունները կփրկեն իր և ընկերների կյանքը, հնարավորություն կտան դրսևորելու իրեն դժվարագույն իրադրություններում՝ որպես քաջ, օրինակելի քաղաքացի ու մարտիկ: Միաժամանակ, այն շատ բան է տալիս անձի համակողմնանի զարգացման տեսանկյունից:

***Նյութի ուսումնասիրումն ու յուրացումը այստեղ պետք է գնա պարզից դեպի բարդը:*** Ցանկացած բարդ գործողություն նախապես պետք է վերածել պարզի, հասարակի, հիմնային տարրերի: Դրանց յուրաքանչյուրի յուրացումից (**սկզբում մտածված**, դանդաղ, բայց ճիշտ կատարումից, բազմակի կրկնումից հետո) անցում է կատարվում դրա ավելի ու ավելի արագ կատարմանը, այնուհետև դրանք փոխկապակցելով և գործողությունը բարդացնելով՝ յուրացվում է ամեն հանգույց և վերջում՝ կատարվում ամբողջական գործողությունը: Յուրաքանչյուր նման գործողություն անհրաժեշտ է փորձարկել և հղկել իրականին մոտ պայմաններում այնքան ժամանակ, մինչև դրանք կատարվեն **ինքնաբերաբար**:

ՆԶՊ առարկայի ուսուցումը 8-րդ դասարանում տրվում է ավելի պարզ, բայց տրվում են հիմնային գաղափարներ, կարողություններ, որոնք հետագայում՝ 9-րդ և հաջորդ դասարաններում, ավելի ու ավելի հղկվում են ընդհանրական գործողությունների ձևով:

Ցածր դասարաններում ավելի շատ ուշադրություն է դարձվում **անհատական պատրաստությանը**, իսկ բարձր դասարաններում, հենվելով դրա վրա, **խմբային (ջոկային) պատրաստվածությանը**: Այստեղ կարևորվում է ջոկի անդամների փոխգործողությունը:

***Նյութի մատուցումն այստեղ սկսվում է փոքր ծավալից դեպի ավելի ու ավելի մեծ ծանրաբեռնվածություն:***

Ուսուցման համար նախատեսված թեմաները պետք է ներկայացվեն և մեկնաբանվեն բազմակողմանի, առավելագույնս մատչելի, հետաքրքրաշարժ ձևերով ու մեթոդներով՝ դրա համար կիրառելով ժամանակակից **համակարգչային և հեռահաղորդակցության միջոցները, տեսացուցադրման սարքերը և վարժամիջոցները**: Որոշակի ձևաչափով ստեղծված **տեսադասերն ու ուսուցողական լրացուցիչ տեսանյութերը** կօգնեն ուսումնական թեման մատուցել առավել ամբողջական, ուսուցանվող գործողությունները ներկայացնել միանշանակ և ապահովել դրանց արդյունավետ յուրացումը ինչպես դպրոցում, այնպես էլ տանը:

Ուսումնական գործընթացում տեսական դրույթները պետք է ոչ միայն փոխկապակցված լինեն գործնականի հետ, այլև յուրացվեն դրա օգնությամբ: Ավելին, **առաջնայինն** այստեղ պետք է լինեն սովորողների **անձնային որակների զարգացումը**, այս ոլորտում **որոշակի գործնական կարողությունների ձեռք բերումն ու հմտությունների զարգացումը**:

Վերջնարդյունքում (դրա հերթական փուլի՝ ուսումնական տարվա արդյունքում) պետք է ստացվեն հետևյալ արդյունքները.

- սովորողների մոտ ռազմագիտության առավել ընդհանուր դրույթների, ինչպես նաև դրա առանձնահատուկ (իրավական, տեխնիկական և այլն) ոլորտների, ԶՈՒ և տարբեր զինատեսակների մասին պետք է **ձևավորվեն որոշակի պատկերացումներ:**
- աշակերտները պետք է ձեռք բերեն անհրաժեշտ **գիտելիքներ**, որոնք կօգնեն ոչ միայն յուրացնել ծրագրով ներառված թեմաները, այլև հասկանալ ռազմագիտության կարևորագույն դրույթները և դրանք կիրառել անհրաժեշտության դեպքում:
- ՆԶՊ և հարակից առարկաների օգնությամբ աշակերտները պետք է **ձեռք բերեն որոշակի կարողություններ**, որոնք կարող են հիմք հանդիսանալ ինչպես հետագա զինծառայության ընթացքում, այնպես էլ առօրյա կյանքում դրսևորելու իրեն որպես արժանի զինծառայող և քաղաքացի:
- ՆԶՊ առարկայի ուսուցման ընթացքում աշակերտների մոտ պետք է **ձևավորվեն որոշակի հմտություններ**, որոնք կօգնեն նրան մարտական կամ այլ բարդ իրադրությունում ոչ միայն պահպանել սեփական կյանքն ու առողջությունը, այլև արագ ու վստահ, բարձր արդյունավետությամբ իրականացնել մարտական կամ այլ առաջադրանքներ:

***Գիտելիքների մատուցումը, կարողությունների ձևավորումը և հմտությունների զարգացումը պետք է համակարգված և հետևողական բնույթ կրեն:*** Դրա իրացման տեխնոլոգիան ենթադրում է գործողությունների հետևյալ հաջորդականությունը.

- սովորողը պետք է սկզբում **պատկերացում** կազմի նյութի մասին,
- դրա ամբողջական *բացահայտման, պարզաբանման* արդյունքում **ձևավորվի ընդհանրական գիտելիքը**,
- գիտելիքի *գործնական կիրառման արդյունքում* ձևավորվեն սովորողի որոշակի մտային և գործնական **կարողությունները**,
- հատուկ վարժանքների շնորհիվ գործնական կարողությունների *բազմակի կիրառման արդյունքում*՝ դրանք զարգացվեն նրա մոտ որպես **հմտություններ**:

Եթե սովորողի մոտ թեմայի վերաբերյալ պատկերացում կազմելու, որոշակի գիտելիքների ձեռք բերման համար նպատակահարմար է նյութի **մշտական, բազմակի և բազմաձև** մատուցումը, ապա որոշակի կարողությունների ճիշտ ձևավորման և հմտությունների զարգացման համար ճիշտ է ուսուցանվող հնարքների և այլ գործողությունների **սկզբում դանդաղ, հետո ավելի ու ավելի արագ** իրականացումը, իսկ վերջնական ամրապնդման համար՝ դրանց իրականացումը՝ մարտականին մոտ պայմաններում:

Ուսուցման գործընթացի առավել արդյունավետ իրականացման համար նպատակահարմար է դպրոցական ծրագրով հարակից առարկաներում խորացված ուսումնասիրել առանձին թեմաներ՝ դրանց տալով ռազմագործնական կիրառման ուղղվածություն:

***Նյութը պետք է մատուցվի դիպարժան*** և հարուցի սովորողների անսքող հետաքրքրությունը: ***Այն պետք է լինի նաև մատչելի:***

**Ավելի ցածր դասարաններում գործնական վարժանքները նպատակահարմար է անցկացնել խաղերի ձևով՝ միջանձնային և միջխմբային մրցակցության պայմաններում:**

Ուսուցման և դաստիարակման ժամանակ պետք է հաշվի առնվեն ինչպես կոլեկտիվ շահն ու կոլեկտիվ դրսևորումները, այնպես էլ յուրաքանչյուր սովորողի ներքին, զուտ անհատական հատկանիշները (խառնվածքը, բնավորությունը, կարողությունները):

Հենց ՆԶՊ առարկայի ուսուցումը պետք է ուղղված լինի հատուկ վարժանքների ձևով նրանց բարոյահոգեբանական հատկանիշների ձևավորմանն ու ուժեղացմանը (հայրենասիրության, կարգապահության, պատասխանատվության, ինքնավստահության, կոլեկտիվիզմի), որոշակի ունակությունների զարգացմանը և նոր կարողությունների ստեղծմանը (ֆիզիկական ընդունակությունների, ֆիզիոլոգիական հատկանիշների, հիշողության, ուշադրության կենտրոնացման ու փոխատեղման, վերլուծական մտածողության):

Հայրենասիրական ոգով դաստիարակության մեջ շատ կարևոր է հասարակության համար ընդունելի վարքային նորմերի ներդրումը և այս նպատակով ընդօրինակման կերպարների վարքային մոդելների (հերոսների, ազգի նվիրյալների վարքային մոդելների) օգտագործումը:

Կարևոր նպատակ և դասընթացի արդյունավետ իրականացման նախապայման է աշակերտների մոտ կարգապահության ապահովումը: Անձի և կոլեկտիվի դաստիարակությունն այս առումով պետք է ուղղված լինի աշակերտների մոտ գիտակցված կարգապահության ձևավորմանը՝ որպես ներքին դիրքորոշում և վարքագիծ: Սա բավականին երկարատև գործընթաց է. հետևապես չի բացառում կարգապահության ապահովումը այլ եղանակներով՝ դրա սկզբնական փուլում:

Ելնելով այն բանից, որ դասարանը, որպես կանոն, միատարր չի լինում, այստեղ կան ընկալունակության տարբեր մակարդակ և դոմինանատ ընկալունակություն ունեցող անձինք: Զինղեկը պետք է նյութի ներկայացման ժամանակ հենվի և՛ տրամաբանական փաստարկներին, և՛ զգացմունքային գործոնին՝ միաժամանակ նյութը մատուցելով գրաֆիկական պատկերների (գծապատկերների, նկարների) օգնությամբ, անմիջական ցուցադրմամբ: Բավական արդյունավետ կարող է լինել ուսուցման տարբեր մեթոդների զուգակցված կիրառումը:

Որպես այդպիսիք կարելի է նշել հետևյալները.

- ցուցադրման մեթոդը,
- պատմողական մեթոդը,
- հարցադրումների մեթոդը,
- զրույցի մեթոդը,

- վարժանքների մեթոդը,
- իրադրության խաղարկման մեթոդը,
- խմբային և անհատական ինքնապատրաստման մեթոդը:

***Դաշտային (ճամբարային) պարապմունքներ***: Այս պարապմունքները հնարավորություն են տալիս իրականին մոտ պայմաններում մատուցել նյութը, ցուցադրել պահանջվող գործողությունները, իսկ սովորողներին՝ գործնական վարժանքների ձևով յուրացնել թեման: Բացի երկարաժամկետ ճամբարային փորձաշրջանից՝ նպատակահարմար է կազմակերպել դաշտային պարապմունքներ շաբաթ կամ կիրակի օրերին՝ աշակերտների և ծնողների համաձայնությամբ, դպրոցի ղեկավարության հետ համաձայնեցված:

Ճամբարային պայմանները առավել մեծ հնարավորություններ են ստեղծում պարապմունքները անցկացնել ինչպես ցերեկային, այնպես էլ երեկոյան ժամերին: Այն հնարավորություն է ընձեռնում ուսուցանել առանձին թեմաներ («կողմնորոշում աստղերով», «Տեղաշարժ մթության մեջ», «Պահակային ծառայության անցկացում», «Քողարկված կրակատեղի պատրաստում» և այլն):

***Շեֆ-զորամաս այցելությունը***: Այն հնարավորություն է տալիս սովորողներին անմիջականորեն ծանոթանալ բանակային առօրյային, մարտական տեխնիկային, սպառազինության տեսակներին և անձնակազմի մարտական պարապմունքներին:

**Արտադասարանական խմբակների կազմակերպումը:** Շատ արդյունավետ է դպրոցներում արտադասարանական «Պատանի հետախույզ», «Պատանի լեռնագնաց» և այլ խմբակների ձևավորումը, դրանց մեջ տարբեր տարքային խմբերի աշակերտների ներառումը: Դրանք հնարավորություն են տալիս ապահովել կարգապահություն, ինտենսիվ ուսուցում: Խմբակների մասնակիցները իրենց վարժվածությամբ, գիտելիքներով, կարգապահությամբ, օրինակ կհանդիսանան համադասարանցիների համար: Նրանցից ամենակազմակերպվածներին կարելի է նշանակել դասարանական ուսումնական ջոկերի (դասակների) հրամանատարներ:

Ավելի ցածր տարիքի երեխաների հետ աշխատանքը ուղղված է նրանց դաստիարակությանը և ուսուցմանն այնպես, որ նրանք ՆԶՊ առարկայից ունենան բարձր պատրաստություն հետագայում՝ 8-րդ և ավելի բարձր դասարաններում:

## 6. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

«Նաժնական զինվորական պատրաստություն» առարկայից սովորողների ուսումնառության գնահատման նպատակն է՝

1) պարզել նրանց գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանության աստիճանը առարկայի չափորոշչով և ծրագրով սահմանված պահանջներին,
2) բացահայտել ուսումնառության գործընթացում յուրաքանչյուր սովորողի ձեռքբերումները, բացթողումները, կարիքներն ու դժվարությունները,
3) օգնել զինվորական ղեկավարին ճշգրտելու յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի հետ տարվող աշխատանքի ծավալն ու բովանդակությունը, հետադարձ կապի միջոցով բարելավելու ուսուցման որակը:

Կիրառվում են քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) գնահատումներ:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ծրագրային նյութի յուրացման մակարդակի, սովորողների անհատական կարիքների, ուսումնական գործընթացի արդյունավետության մասին անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով: Ձևավորող գնահատման ձևերն ու մեթոդները ընտրում է զինվորական ղեկավարը:

Միավորային գնահատումն իրականացվում է որոշակի ժամանակահատվածում ուսումնական նյութի որոշակի ծավալի շրջանակներում սովորողների ձեռքբերումները պարզելու և պաշտոնապես գրանցելու նպատակով: Միավորային գնահատումը սովորաբար իրականացվում է առանձին թեմատիկ միավորի ուսուցման, քառորդի կամ կիսամյակի վերջում:

Միավորային գնահատումն իրականացվում է 10 միավորային սանդղակով: Գնահատման այլ սանդղակներ կիրառելիս արդյունքներն արտահայտվում և ամրագրվում են 10 միավորային սանդղակով:

Գնահատման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ բաղադրիչները՝

1) գիտելիք և ընկալում,
2) տեղեկույթի կիրառում, խնդիրների լուծում,
3) փորձարարական, հետազոտական հմտություններ:

|  | Բաժիններ / դասարաններ | 8-րդ | 9-րդ | 10-րդ | 11-րդ | 12-րդ | Σ ժամեր ըստ բաժինների |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ներածություն | 1 | 0 | 0 | 0 | 0 | 1 |
| 2 | Ռազմարվեստի պատմություն | 3 | 2 | 4 | 3 | 2 | 14 |
| 3 | Մարտավարության հիմունքներ | 1 | 2 | 4 | 6 | 5 | 18 |
| 4 | Մարտավարական-ֆիզիկական պատրաստություն | 6 | 5 | 2 | 0 | 0 | 13 |
| 5 | Կրակային պատրաստություն | 5 | 7 | 5 | 3 | 5 | 25 |
| 6 | Իրավական պատրաստություն | 3 | 2 | 2 | 4 | 1 | 12 |
| 7 | Ինժեներասակրավորային պատրաստության | 0 | 2 | 2 | 2 | 0 | 6 |
| 8 | Շարային պատրաստություն | 2 | 2 | 1 | 1 | 0 | 8 |
| 9 | Ռազմական տեղագրության հիմունքներ | 3 | 4 | 1 | 2 | 4 | 14 |
| 10 | Կապ և տեղեկատվական անվտանգություն | 0 | 0 | 0 | 1 | 2 | 3 |
| 11 | Հոգեբանական պատրաստության հիմունքներ | 1 | 1 | 1 | 2 | 2 | 7 |
| 12 | Լեռնային-հատուկ պատրաստության հիմունքներ | 0 | 0 | 2 | 3 | 6 | 11 |
| 13 | Անվտանգ կենսագործունեություն և կենսապահովում | 4 | 3 | 5 | 3 | 0 | 15 |
| 14 | Առաջին օգնության հիմունքներ | 4 | 3 | 4 | 3 | 6 | 20 |
| 15 | Ամփոփում | 1 | 1 | 1 | 1 | 1 | 5 |
|  | Σ ժամեր ըստ դասարանների | 34 | 34 | 34 | 34 | 34 | 153 |

«ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐ

## ԿԱՅԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳՐԵՐ

8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Առաջարկվում է 34 ԺԱՄ)

| Բաժին | Թեմա | ժամաքան | Հիմնական գաղափարներ |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| | | ակ | |
| Ներածություն | | 1 | |
| 1. Ռազմարվեստի պատմություն:<br>ՀՀ Զինված ուժեր | 1.1. Ռազմարվեստի պատմության հիմնադրույթներ | 3 | Հայրենասիրական դաստիարակություն,<br>Մարտական պատրաստության հիմունքներ |
| 2. Մարտավարության հիմունքներ | 2.1. ՀՀ ԶՈՒ զորատեսակների կառուցվածքային միավորները: Գաղափար մոտոհրաձգային դասակի և ջոկի, մոբիլ ջոկատների, կամավորական ջոկատների ու աշխարհազորի մասին | 1 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 3. Մարտավարական-ֆիզիկական պատրաստություն | 3.1. Շարժողական ընդունակությունների, ֆիզիոլոգիական որակների զարգացում, ելակետային հմտությունների ձևավորում | 3 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| | 3.2. Մարտի դաշտում տեղաշարժի տարրեր | 3 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 4. Կրակային պատրաստություն | 4.1. Հրաձգային զենք | 2 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| | 4.2. Փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանից կրակ վարելը | 3 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 5. Ռազմական տեղագրության<br>հիմունքներ | 5. 1. Տեղանք | 1 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| | 5.2. Հորիզոնի կողմերի որոշումը տեղանքում | 2 | Մարտական պատրաստության հիմունքներ |

| | | | |
|---|---|---|---|
| 6. Իրավական պատրաստություն | 6.1. ՀՀ ԶՈՒ կանոնադրություն: Կարգապահություն: Զինվորական տարբերանշաններ | 2 | Հայրենասիրական դաստիարակություն,<br>Մարտական պատրաստության հիմունքներ |
| | 6.2. Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) ձևավորման նախադրյալները | 1 | Մարդասիրություն,<br>Հայրենասիրական դաստիարակություն,<br>Մարտական պատրաստության հիմունքներ |
| 7. Շարային պատրաստություն | 7.1. Շարային պատրաստության տարրերը | 2 | Մարտական պատրաստության հիմունքներ, |
| 8. Հոգեբանական պատրաստություն | 8.1. Անձ, քաղաքացի և հասարակություն | 1 | Հայրենասիրական դաստիարակություն,<br>Մարտական պատրաստության հիմունքներ |
| | | | |
| 9. Անվտանգ կենսագործնեություն<br>և կենսապահովում | 9.1. Բնածին արտակարգ իրավիճակներ: Բնակչության վարքի կանոնները | 2 | Անվտանգ կենսագործնեություն և կենսապահովում, |
| | 9.2. Կենցաղային անվտանգություն | 1 | Անվտանգ կենսագործնեություն և կենսապահովում |
| | 9.3. Կենսապահովումն արտակարգ իրավիճակներում. ջերմության ապահովումը | 1 | Անվտանգ կենսագործնեություն և կենսապահովում |
| 10. Առաջին օգնության հիմունքներ | 10.1. Առաջին օգնության հիմնադրույթներ | 3 | Առաջին օգնության հիմունքներ |
| | 10.2. Վարակիչ հիվանդությունների | 1 | Առաջին օգնության հիմունքներ |

| | | | |
|---|---|---|---|
| | կանխարգելում: | | |
| Ամփոփում | | 1 | |
| Ընդամենը | | 34 | |

| Թեմա 1.1. |
|---|
| Ռազմարվեստի պատմության հիմնադրույթներ (3 ժամ) |
| Նպատակը |
| Պատկերացում ունենալ զենքի, զինամթերքի ստեղծման և զարգացման վերաբերյալ:<br><br>Ձևավորել պատկերացումներ ռազմարվեստ հասկացության՝ որպես մարդկային կարևոր գործունեության մասին պատմականորեն ձևավորված և գիտականորեն հիմնավորված գիտելիքների համակարգի մասին:<br><br>Ընդլայնել գիտելիքները ՀՀ ԶՈՒ, դրա ստեղծման և անցած ուղու մասին: Ձևավորել դրական վերաբերմունք ՀՀ ԶՈՒ և զինծառայության վերաբերյալ: |
| Վերջնարդյունքները |
| Կարող են նկարագրել զենքի և զինամթերքի ստեղծման և զարգացման պատմությանը:<br><br>Կարող են ընդհանուր գծերով նկարագրել ՀՀ ԶՈՒ հիմնական գործառույթները, ներկայացնել դրա ստեղծման նախապատմությունը և անցած ուղին: |

<table>
<tr><td colspan="2">Պատկերացում ունեն <ռազմարվեստ> հասկացության մասին:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակությունը</td></tr>
<tr><td colspan="2">Զենքի և զինամթերքի ստեղծման և զարգացման պատմությունը:<br><br>Ռազմարվեստի ներկայացումը՝ որպես ռազմական (մարտական) գործողությունների նախապատրաստման և իրականացման տեսություն և պրակտիկա:<br><br>Ռազմարվեստի պատմական ձևավորումը: Անցյալի մեծագույն ռազմագետները: Ռազմարվեստի ուսումնասիրման նշանակությունը:<br><br>ՀՀ ԶՈՒ, դրանց  հիմնական գործառույթները, ստեղծումը, անցած ուղին:</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Ուսուցչի ուղղորդմամբ  ինքնուրույն (ենթախմբով) ինտերնետում որոնում են, գտնում և ուսումնասիրում առանձին զինատեսակի ստեղծման, ռազմարվեստի գծով հայոց կամ համաշխարհային պատմությունից անցած թեմաներով պատմական անցքի, հռչակավոր ռազմագետի վերաբերյալ նյութեր, համակարգում դրանք և ներկայացնում դասարանին:</td><td>Ռազմարվեստ, ստրատեգեմա,<br><br>Զինված ուժեր:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">Ինֆորմատիկա: Կարողանան օգտվել համակարգչից և ինտերնետի տեղեկատվական հենքերից: Կարողանան նյութի համակարգչային Power Point ծրագրով ներկայացնել:<br><br>Ռուսերեն (այլ օտար լեզու): Կարողանան Ինտերնետի օտար լեզվով նյութը հասկանալ, թարգմանել հայերեն:<br><br>Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br><br>Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն: Ծանոթ լինեն Հին աշխարհի, միջնադարի և նոր ժամանակների պատերազմների պատմությանը և ռազմագետներին (հռչակավոր զորավարներին):</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ</td></tr>
</table>

| |
|---|
| 1,2,3,7,8,10,13,16,17,18,20,24,25,26,28,30,31,32,33,35,36,44,45,46,47,48 |
| **Թեմա 2.1** |
| **ՀՀ ԶՈՒ զորատեսակների ստորաբաժանումները: Մոտոհրաձգային դասակ և ջոկ (1 ժամ)** |
| Նպատակը |
| Պատկերացում ունենալ ՀՀ ԶՈՒ զորատեսակների, դրանց ստորաբաժանումների մասին:<br>Կազմավորել դասարանական դասակը և դրա մեջ մտնող ջոկերը: |
| Վերջնարդյունքները |
| Կարողանում են նշել ՀՀ ԶՈՒ առանձին զորատեսակները, դրանց ստորաբաժանումները:<br>Գիտեն մոտահրաձգային դասակի կառուցվածքը:<br>Գիտեն ուսումնական դասակում (ջոկում) իր իրավունքներն ու պարտականությունները:<br>Գիտեն դասի հերթապահի պարտականությունները և կարողանում են կատարել դրանք: |
| Բովանդակությունը |
| ՀՀ ԶՈՒ առանձին զորատեսակները, դրանց նշանակությունը, հիմնական ստորաբաժանումները, համարժեք միավորները այլ զորատեսակներում:<br>Մոտոհրաձգային դասակ-ջոկ կառուցվածքը:<br>Դասարանական-ուսումնական դասակ, ջոկեր: Դասակի, ջոկերի հրամանատարները, նրանց իրավունքներն ու պարտականությունները:<br>Դասի հերթապահի իրավունքներն ու պարտականությունները:<br>Դասի սկիզբի ու ավարտի կազմակերպումը: Հերթապահի զեկույցը: Զինվորական ողջույնի կարգը:<br>Տարբեր իրադրություններում զինղեկին դիմելու կարգը: |

| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
|---|---|
| Աշակերտների կողմից հերթապահի (օրապահի) զեկույցի փործարկում:<br>Ուսումնական դասակի անձնակազմի զինվորական ողջույնի կարգի և քայլերի գործնական յուրացում:<br>Զինղեկին դիմելու, դասարան մտնելու և դասարանից դուրս  գալու կարգի գործնական յուրացում: | Զինված ուժերի զորատեսակ,<br>Կառուցվածք և գործառույթ,<br>Կառուցվածքային միավոր,<br>Զորամաս և ստորաբաժանում,<br>Հրամանատար և ենթակա: |

| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
|---|
| 1,2,30,39,42 |

| ԹԵՄԱ 3.1 |
|---|
| **Շարժողական ընդունակությունների, ֆիզիոլոգիական որակների զարգացում, ելակետային հմտությունների ձևավորում  (3 ժամ)** |
| Նպատակը |
| Զարգացնել աշակերտի շարժողական ընդունակությունները՝ ուժ, արագություն, ճկունությունը, դիմացկունությունը, հավասարակշռության զգացողությունը և շարժումների կոորդինացիան:<br>Ձևավորել ելակետային հմտություններ՝ կապված հրաձության դիրքավորման, դիրքավորման փոխման, մարտի դաշտում տեղաշարժվելու, հրաձգության տարրերի ինքնաբերաբար կատարման հետ: |
| Վերջնարդյունքները |

<table>
<tr><td colspan="2">Ցուցաբերում են բավարար ֆիզիկական տվյալներ ըստ պահանջվող նորմերի, ֆիզիոլոգիական որակներ:<br><br>Ցուցաբերում են որոշակի կարողություններ և տարրական հմտություններ՝ կապված հրաձության դիրքավորման, մի դիրքավորումից՝ մյուսին անցնելու, մարտի դաշտում տեղաշարժվելու, հրաձգության տարրերի ինքնաբերաբար կատարման հետ (նորմեր):<br><br>Տիրապետում են հրաձգության կայունություն ապահովող՝ կանգնած, ծնկած, պառկած դիրքավորումներին:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակությունը</td></tr>
<tr><td colspan="2">Նախավարժանք:<br><br>Հատուկ վարժանքներ, որ նպաստում են որոշ մկանների ուժին, մարմնի ճկունությանը, դիմացկունությանը, հավասարակշռության զգացողությանը և շարժումների կոորդինացիային:<br><br>Հատուկ համալիր վարժանքներ, որ պարունակում են հրաձության դիրքավորման, մի դիրքավորումից՝ մյուսին անցնելու, մարտի դաշտում տեղաշարժվելու, հրաձգության կատարման տարրեր՝ ցուցադրելով դիրքավորումը, դրանց անցումները, տեղաշարժերը, հրաձգության նմանակումը:<br><br>Հրաձգության կանգնած, ծնկած, պառկած դիրքավորումների մանրամասն նկարագրությունը, այս դիրքավորումներն ընդունելու քայլերը:</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Ամենօրյա առավոտյան լիցքային վարժությունների կատարում տանը (դպրոցում):<br><br>Նախավարժանքի և հատուկ վարժանքների կատարում՝ դրանց բազմակի կրկնման ձևով:<br><br>Քայլ առ քայլ անցում հրաձգության կանգնած, ծնկած, պառկած դիրքավորումներին (սկսելով պառկած դիրքավորումից)՝ ուշադիր հետևելով<br><br>ոտքերի, իրանի, ձեռքերի դիրքերին: Վարժանքների կատարման ժամանակ օգտագործել օդամղիչ հրացան (հրացանի կամ ինքնաձիգի<br><br>նմանակիչ՝ ցուցադրելով զենքը 4 կետում ֆիքսելու տեխնիկան,<br><br>Վարժանքի ժամանակ կանոնավորում ենք շնչառությունը: Փորձում ենք շնչել <փորով>:</td><td>Պատկերացումներ-գիտելիքներ-կարողություններ-հմտություններ,<br><br>Անձի որակ, հենքային (ելակետային) որակներ,<br><br>Ֆիզիկական հատկանիշներ,<br><br>Զարգացում,</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | Պահանջներ: |

**Միջառարկայական կապեր**

Ֆիզկուլտուրա: Ֆիզիկական որակներ՝ ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա:

նախավարժանք, ճիշտ (<փորով>) շնչառություն, շնչառական վարժանքներ:

Կենսաբանություն: Մարմնակազմություն՝ հենաշարժողական համակարգ, մկանային համակարգ, ջլեր: Շնչառական համակարգ, շնչառություն ստոծանիով (<փորով>): Հավասարակշռության և շարժումների կոորդինացիան կազմակերպող օրգաններ. ներքին ականջ և ուղեղիկ:

Ֆիզիկա: Հավասարակշռություն, ծանրության կենտրոն, կայունություն, պտտական շարժում, պտտման առանցք, գլորում, իներցիա, իներցիայի մոմենտ, հետհարված:

**Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ**

4,6,20,33,34,48,49,50,52

## Թեմա 3.2.

### Մարտի դաշտում տեղաշարժի տարրեր (4 ժամ)

**Նպատակը**

Աշակերտների մոտ ձևավորել գործնական կարողություններ և առանձին հմտություններ՝ արագ, աննկատ, անվնաս, արդյունավետ (քիչ էներգիայի ծախսով) տեղաշարժվել մարտի դաշտում, արդյունավետ հրաձգության համար մշտապես ապահովել մարմնի հավասարակշիռ վիճակ, ապահովելով սեփական անվտանգությունը և տրված առաջադրանքի իրականացումը:

| Վերջնարդյունքները | |
|---|---|
| Կարողանում են սպորտային ներքնակի վրա ուսի վրայով հմտորեն գլորվել դեպի առաջ և ընթացքից ոտքի կանգնել:<br><br>Կարողանում են ոտքերի և մարմնի հերթական շարժումներով հմտորեն գլորվել դեպի կողք (աջ և ձախ ուղղություններով)՝ չբարձրացնելով ծնկները, ապահովելով ընթացքից հրաձգության համար կայուն դիրք:<br><br>Կարողանում են ոտքերի և մարմնի հերթական հմուտ շարժումներով՝ փորսող տեղաշարժվել առաջ (նորմեր):<br><br>Կարողանում են ոտքերի և մարմնի հերթական հմուտ շարժումներով՝ կողքի սողանցումով տեղաշարժվել առաջ (նորմեր): | |
| **Բովանդակությունը** | |
| Ուսի վրայով գլորում դեպի առաջ՝ ընթացքից ոտքի կանգնելով:<br><br>Գլորում դեպի կողք՝ ապահովելով ընթացքից հրաձգության կայուն դիրքեր:<br><br>Փորսող տեղաշարժ դեպի առաջ: Ներկայացվում է տեղում կատարվող վարժանքը՝ շարժումների կոորդինացիայի ուժեղացման և ոտքերով-ձեռքերով համաչափ շարժման համար:<br><br>Կողքի սողեսող տեղաշարժ: Ներկայացվում է տեղում կատարվող վարժանքը՝ շարժումների կոորդինացիայի ուժեղացման և ոտքերով-ձեռքերով համաչափ շարժման համար:<br><br>Ներկայացվում է դրանց նշանակությունը և կարևորումը: | |
| **Գործնական աշխատանքներ** | **Ընդհանրական գաղափարներ** |
| Առավոտյան լիցքային վարժություններ տանը (դպրոցում):<br><br>Դասի սկզբում իրականացնել նախավարժանք:<br><br>Իրականացնել վարժանքներ, որոնք պարունակում են այստեղ իրականցվող տեղաշարժի տարրեր՝ դրանք յուրացնելու մինչև հմտություն, ուժեղացնելու շարժումների կոորդինացիան և հավասարակշռության զգացողությունը:<br><br>Իրականացնել վարժանքները՝ ուսի գլորման համար օգտագործելով սպորտային ներքնակներ և իրականացնելով գլորվողի ապահովումը: Այս վերջին դեպքի համար շատ կարևոր է սեփական | Շարժողական ընդունակություններ․<br><br>ուժ, ճկունություն, արագություն, դիմացկունություն, հավասարակշռություն, շարժումների կոորդինացիա,<br><br>Կարողություն- հմտություն |

| | |
|---|---|
| վախի հաղթահարումը աշակերտի կողմից: | |

Միջառարկայական կապեր

Ֆիզկուլտուրա: Շարժողական ընդունակություններ՝ ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա:

նախավարժանք, ֆիզիոլոգիական որակների զարգացում՝ ճիշտ շնչառության կազմակերպմամբ՝ ստոծանիով (<փորով>) շնչառություն, շնչառական վարժանքներ:

Կենսաբանություն: Մարմնակազմություն՝ հենաշարժողական համակարգ, մկանային համակարգ, ջլեր: Շնչառական համակարգ, շնչառություն ստոծանիով (<փորով>): Հավասարակշռության և շարժումների կոորդինացիան կազմակերպող օրգաններ. ներքին ականջ և ուղեղիկ:

Ֆիզիկա: Հավասարակշռություն, ծանրության կենտրոն, կայունություն, պտտական շարժում, պտտման առանցք, գլորում, իներցիա, իներցիայի մոմենտ, հետհարված, շփում, շփման մակերես, շփման ուժ:

Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ

4,6,20,33,34,48,49,50,52

**Թեմա 4.1.**

**Հրածգային զենք. ընդհանրական նկարագիր (2 ժամ)**

Նպատակը

Աշակերտներին ծանոթացնել հրածգային զենքի նշանակության, կրակային պատրաստության խնդիրների հետ:

Ուսուցանել անվտանգության կանոնները զենքի օգտագործմամբ պարապմունքների ժամանակ:

Վերջնարդյունքները

Կարող են բացատրել հրածգային զենքի նշանակությունը

Կարող են ներկայացնել կրակային պատրաստության խնդիրները,

Վստահ գիտեն անվտանգության կանոնները պարապմունքների ժամանակ:

| Բովանդակությունը | |
|---|---|
| Հրաձգային զենքի նշանակությունը,<br>Կրակային պատրաստության խնդիրները,<br>Անվտանգության կանոնները պարապմունքների ժամանակ: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Ջինղեկի ուղղորդմամբ Ինտերնետում գտնում և ուսումնասիրում են վառոդի, հարթափող և ակոսավոր հրաձգային զենքի ստեղծման նախապատմությունը, ներկայացնում դրանք համակարգչային Power Point ծրագրով:<br>Տանը վարժ սերտել  կրակային պատրաստության խնդիրները և անվտանգության կանոնները: | Հրազեն,<br>Անվտանգություն,<br>Պաշտպանություն: |
| Միջառարկայական կապեր | |
| Ինֆորմատիկա: Կարողանան օգտվել համակարգչից և ինտերնետի տեղեկատվական հենքերից: Կարողանան նյութի համակարգչային Power Point ծրագրով ներկայացնել:<br>Ռուսերեն (այլ օտար լեզու): Կարողանան Ինտերնետի օտար լեզվով նյութը հասկանալ, թարգմանել հայերեն:<br>Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br>Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն: Ծանոթ լինեն Հին աշխարհի, միջնադարի և նոր ժամանակների պատերազմների պատմությանը, կիրառվող զինատեսակներին, դրանց ստեղծման և զարգացման պատմությանը: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 1,2,3,4,5,9,13,24,28,30,31,33,34,42,48,49,52 | |
| **Թեմա  4.2.** | |
| **Փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանից կրակ վարելը (3 ժամ)** | |

<table>
<tr><th colspan="2">Նպատակը</th></tr>
<tr><td colspan="2">Ծանոթանալ փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանի կառուցվածքին, դրա մեխանիզմի աշխատանքին: Իմանա նշանառության տարրերի նշանակությունը և կարողանալ բացատրել <հավասար նշանահատիկ>-ի գաղափարը և ցուցադրել այն փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանի նշանառության տարրերի օգնությամբ:<br><br>Կարողանալ հրաձգություն վարել փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանից:</td></tr>
<tr><th colspan="2">Վերջնարդյունքները</th></tr>
<tr><td colspan="2">Գիտեն փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանի կառուցվածքը, դրա մեխանիզմի աշխատանքը, նշան բռնելու տեխնիկան:<br><br>Կարող են պառկած դիրքավորմամբ ֆիքսել փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանը և նշանառու կրակ վարել (նորմեր):</td></tr>
<tr><th colspan="2">Բովանդակությունը</th></tr>
<tr><td colspan="2">Փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացան․ նշանառության տարրերը:<br><br>Հրացանով նշան բռնելու տեխնիկան․ «Հավասար նշանահատիկ»:<br><br>Պառկած դիրքավորումի ժամանակ հրացանը ուսին հարմարեցնելը, նշան բռնելը, ձգանը քաշելը:</td></tr>
<tr><th>Գործնական աշխատանքներ</th><th>Ընդհանրական գաղափարներ</th></tr>
<tr><td>Վարժվել պառկած դիրքավորման ժամանակ հրացանը ուսին հարմարեցնելը, նշան բռնելը, ձգանը քաշելը:<br><br>Հրաձգություն փոքր տրամաչափի (օդամղիչ) հրացանից:</td><td>Հրազեն,<br><br>Նշանառություն,<br><br>Նախանական փորձ:</td></tr>
<tr><th colspan="2">Միջառարկայական կապեր</th></tr>
<tr><td colspan="2">Ֆիզիկա: Աչքի ֆոկուս, հետհարված:<br><br>Ֆիզկուլտուրա: Նախավարժանք, շարժումների կոորդինացիայի և հավասարակշռության ուժեղացում, ճիշտ (ստոծանիով կամ <փորով>) շնչառություն:<br><br>Կենսաբանություն: Ուսահոդ, դելտայաձև մկան, կրծքամկան, մատների հոդեր, ստոծանիով (<փորով>) շնչառություն:</td></tr>
</table>

| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
|---|---|
| 1,2,3,4,5,9,13,24,28,30,31,33,34,42,48,49,52 | |
| **Թեմա 5.1.** | |
| **Տեղանք (1 ժամ)** | |
| Նպատակը | |
| Ճանաչել տեղանքի բնորոշիչները, տարբերել բնական և արհեստական առարկաները:<br>Բնութագրել տեղանքի տարատեսակները, ներկայացնել դրանց մարտավարական հատկանիշները հարձակողական և պաշտպանական տեսանկյունից: | |
| Վերջնարդյունքները | |
| Կարող են թվարկել տեղանքի բնորոշիչները,<br>Կարող են ներկայացնել բնական և արհեստական առարկաները,<br>Կարող են թվարկել տեղանքի տարատեսակները, ներկայացնել դրանց մարտավարական հատկանիշները: | |
| Բովանդակությունը | |
| Տեղանքի ռելիեֆ և առարկաներ:<br>Տեղանքի տեսակները և դրանց մարտավարական հատկանիշները: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Կոնկրետ տեղանքի տեսակների դիտարկում, ռելիեֆի նկարագրում, բնական և արհեստական առարկաների թվարկում:<br>Կոնկրետ տեղանքի մարտավարական հատկանիշների գնահատում հարձակողական (պաշտպանողական) մարտերի տեսանկյունից: | Տեղանք, տեղանքի ռելիեֆ, տեղանքի բնական (արհեստական) առարկա,<br>Մարտավարական |

| | |
|---|---|
| | հատկանիշ,<br><br>Հարձակում, պաշտպանություն,<br><br>Անցանելիություն, բնական և արհեստական խոչնդոտ: |
| Միջառարկայական կապեր | |
| Հայոց լեզու: Կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր գաղափարները: Մտքերն արտահայտել գրավոր և բանավոր եղանակով, տրամաբանված:<br><br>Ես և շրջակա աշխարհը: Տեղանք: Հարթավայրեր, լեռներ, ժայռեր, բարձրավանդակներ, թփուտներ, անտառներ, անապատներ, ճահիճներ:<br><br>Բնագիտություն: Տեղանք, ռելիեֆ, տեղանքի բնական և արհեստական առարկաներ, լեռներ, ժայռեր, կիրճեր, ձորեր, անտառաթփուտային վայրեր, կտրտվածություն, անցանելիություն: Տեղանքի տեսակները:<br><br>Աշխարհագրություն: Հարավային Կովկաս, Հայաստան, Ադրբեջան, Թուրքիա. կլիման, տեղանքը, լեռնաշղթաններ, գետեր, լճեր: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 1,2,3,4,5,7,8,9,13,25,29,30,31,33,52 | |
| **Թեմա 5.2** | |
| **Հորիզոնի կողմերի որոշումը տեղանքում (2 ժամ)** | |
| Նպատակը | |
| Կարողանալ հորիզոնի կողմերը որոշել երկնային լուսատուներով, տեղանքի բնական միջոցներով և բնության այլ երևույթներով: | |
| Վերջնարդյունքները | |
| Կարող են նկարագրել հորիզոնի կողմերի որոշման խնդիրը:<br><br>Կարող են հորիզոնի կողմերը որոշել կողմնացույցի օգնությամբ, երկնային լուսատուներով, տեղանքի բնական միջոցներով և | |

| | |
|---|---|
| բնության այլ երևույթներով: | |
| Բովանդակությունը | |
| Երկրի աշխարհագրական և մագնիսական բևեռներ:<br>Կողմնացույցի կառուցվածքը և աշխատանքը:<br>Հորիզոնի կողմերի որոշումը կողմնացույցի օգնությամբ:<br>Հորիզոնի կողմերի որոշումը երկնային լուսատուներով, տեղանքի բնական միջոցներով և բնության այլ երևույթներով: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Հորիզոնի կողմերի որոշումը Արևի և առարկայի ստվերի օգնությամբ:<br>Հորիզոնի կողմերի որոշումը Արևի և սլաքով ժամացույցի օգնությամբ:<br>Հորիզոնի կողմերի որոշումը աստղալից գիշերը՝ Բևեռային աստղի և լուսնի օգնությամբ:<br>Հորիզոնի կողմերի որոշումը միայնակ ծառի սաղարթի, բնի, մամռակալած հատվածի օգնությամբ:<br>Հորիզոնի կողմերի որոշումը մրջնաբների օգնությամբ:<br>Հորիզոնի կողմերի որոշումը բարձունքների ձյան հալած և ձյունապատ հատվածների օգնությամբ:<br>Հորիզոնի կողմերի որոշումը թռչունների չվելու օգնությամբ:<br>Հորիզոնի կողմերի որոշումը կողմնացույցի (սմարթֆոնի) օգնությամբ: | Օրինաչափություններ<br>Երկիր, աշխարհագրական և մագնիսական բևեռներ,<br>Միջօրեականներ և զուգահեռականներ,<br>Հորիզոն, հորիզոնի կողմեր,<br>Կողմնացույց: |
| Միջառարկայական կապեր | |
| Հայոց լեզու: Կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր գաղափարները: Մտքերն արտահայտել գրավոր և բանավոր եղանակով, տրամաբանված:<br>Ես և շրջակա աշխարհը: Տեղանք: Հարթավայրեր, լեռներ, ժայռեր, բարձրավանդակներ, թփուտներ, անտառներ, անապատներ, ճահիճներ: | |

| |
|---|
| Բնագիտություն: Տեղանք, ռելիեֆ, տեղանքի բնական և արհեստական առարկաներ, լեռներ, ժայռեր, կիրճեր, ձորեր, անտառաթփուտային վայրեր, կտրտվածություն, անցանելիություն: Տեղանքի տեսակները:<br>Աշխարհագրություն: Տեղանք: Արև, Լուսին, մոլորակներ, աստղեր, Մեծ Արջ և Փոքր Արջ համաստեղություններ, Բևեռային աստղ: Երկիր մոլորակ: Երկրի պտույտը իր առանցքի և Արևի շուրջը․ ցերեկ և գիշեր, տարվա եղանակներ: Աշխարհագրական և մագնիսական բևեռներ, հասարակած: Երկրի կողմերը: Կողմնորոշում: Կողմնացույց: |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
| 1,2,3,4,5,7,8,9,13,25,29,30,31,33,52 |

| **Թեմա 6.1.** |
|---|
| **ՀՀ ԶՈՒ-ն Հայաստանի ռազմական անվտանգության երաշխավորն է: ՀՀ ԶՈւ ստեղծումը: Զինվորական տարբերանշաններ (1 ժամ)** |
| Նպատակը |
| Պատկերացում ունենալ կարգապահության հիմնախնդրի մասին և կարևորի դրա դերը ՀՀ ԶՈՒ-ում:<br>Կարողանալ զինվորական տարբերանշաններով առանձնացնել զորատեսակները և ճանաչել զինվորական կոչումները՝ ըստ ուսադիրների տարբերանշանների: |
| Վերջնարդյունքները |
| Գիտեն կարգապահության դերը և կարող են հիմնավորել դրա անհրաժեշտությանը ԶՈւ-ում:<br>Պատկերացում ունեն ՀՀ ԶՈՒ տարբերանշաններից: Գիտեն զինվորական կոչումները և ուսադիրների վրա դրանց համապատասխան տարբերանշանները: |
| Բովանդակությունը |
| Կարգապահության խնդիրը ԶՈւ-ում: |

| | |
|---|---|
| ՀՀ ԶՈՒ տարբերանշաններ:<br><br>Զինվորական կոչումներ: Ուսադիրների տարբերանշանները: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Հայտարարված զինվորական կոչումների համապատասխան ուսադիրը նկարել:<br><br>Ցուցադրված ուսադիրի նկարից իմանալ զինվորական կոչումը: | Կարգապահության հիմնախնդիր:<br><br>Զինվորական տարբերանշաններ:<br><br>Զինվորական կոչումներ:<br><br>Ճանաչողություն: |
| Միջառարկայական կապեր | |
| Հայոց լեզու: Կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր գաղափարները: Մտքերն արտահայտել գրավոր և բանավոր եղանակով, տրամաբանված:<br><br>Հասարակագիտություն: Հասարակական գիտակցություն: Կարգապահություն: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 1,2,3,8,13,22,24,30,31,33,35,36,37,38,39,41,42,43,52 | |
| **Թեմա 6.2** | |
| **Միջազգային մարդասիրական իրավունքի գաղափարը (1 ժամ)** | |
| Նպատակը | |
| Դաստիարակել մարդասիրության ոգով, իմանալ ՄՄԻ նախատեսված իրավական պատասխանատվության նորմը: | |
| Վերջնարդյունքները | |
| Կարող են բացատրել,  թե ինչ է մարդասիրությունը, կարեկցանքը, խիղճըև ինչպես պետք է դրանք դրսևորվեն պատերազմների | |

| | |
|---|---|
| ժամանակ:<br><br>Գիտեն, որ միջազգային իրավունքի խախտումների համար որոշակի իրավական պատասխանատվություն է նախատեսվում: | |
| Բովանդակությունը | |
| Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի (ԿԽՄԿ) ստեղծումը և գործունեությունը․ պատմական ակնարկ: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Ինտերնետից քաշել թեմայի վերաբերյալ համապատասխան տեսաֆիլմեր և դիտել: | Օրինաչափություններ<br><br>Պատերազմ և խաղաղություն,<br><br>Մարդասիրություն, կարեկցանք, խիղճ,<br><br>Մարդասիրական առաքելություն: |
| Միջառարկայական կապեր | |
| Ինֆորմատիկա: Կարողանան օգտվել համակարգչից և ինտերնետի տեղեկատվական հենքերից: Կարողանան նյութի համակարգչային Power Point ծրագրով ներկայացնել:<br><br>Ռուսերեն (այլ օտար լեզու): Կարողանան Ինտերնետի օտար լեզվով նյութը հասկանալ, թարգմանել հայերեն:<br><br>Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br><br>Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն: Ծանոթ լինեն տարբեր ժամանակների պատերազմների պատմությանը, մարդկային կորուստներին և տառապանքներին: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 1,2,3,7,22,24,26,28,30,31,32,33,35,36,39,40,41,42,43,52 | |

| **Թեմա 7.1.** |
|---|
| **Շարային պատրաստության տարրերը (2 ժամ)** |

<table>
<tr><td colspan="2">Նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">Տիրապետել շարային կանոնադրության տարրերին, կարողանալ դրանք կիրառել գործնականում:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքները</td></tr>
<tr><td colspan="2">Գիտեն շարքի տեսակները, դրա բաղկացուցիչ տարրերը:<br><br>Ծանոթ են շարային հրամանների կառուցվածքին և կարող են դրանց համապատասխան արձագանքել:<br><br>Կատարում են զինվորականի պարտականությունները շարք կանգնելուց առաջ և շարքում:<br><br>Կարողանում են զինվորական ողջույնին պատասխանել շարքում:<br><br>Տիրապետում են շարային վարժաձևերի․ ընդունել շարային կեցվածք, կատարել շարային քայլք, դարձումներ տեղում և շարժման ժամանակ:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակությունը</td></tr>
<tr><td colspan="2">Շարքի տեսակները, բաղկացուցիչ տարրերը:<br><br>Զինվորական ողջույն:<br><br>Շարային հրամաններ:<br><br>Զինվորականի պարտականությունները շարք կանգնելուց առաջ և շարքում:<br><br>Շարային կեցվածք, դարձումներ տեղում:<br><br>Շարային քայլ, դարձումներ շարժման ժամանակ:</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Շարային վարժանքներ:</td><td>Հրամաններ,<br><br>Պարտականություններ,<br><br>Շարային կեցվածք:</td></tr>
</table>

| |
|---|
| Միջառարկայական կապեր |
| Ֆիզկուլտուրա: Շարային պատրաստություն․ Շարքի տեսակները․ տողան և շարասյուն, խիտ և նոսր շարքեր: Աշակերտներին ողջունելը և հրաժեշտ տալը: Հիմնական շարային հրամաններ: Աշակերտի պարտականությունները շարք կանգնելուց առաջ և շարքում: Շարային կեցվածք, դարձումներ տեղում: Շարային քայլ, դարձումներ շարժման ժամանակ: |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
| 1,2,24,33,34,42,49 |
| **Թեմա 8.1.** |
| **Հոգեբանական պատրաստություն հասկացությունը և տեսակները (1 ժամ)**<br>**Արժեքներ, վարքականոն, օրինակելի անձ: Հայաստանի Հանրապետության զինվորականի վարքականոնը:** |
| Նպատակը |
| Սովորողներին գաղափար տալ հոգեբանական պատրաստության վերաբերյալ և նրանց մեջ ձևավորել ընդհանուր և հատուկ պատրաստությունների վերաբերյալ պատկերացումներ: Զարգացնել սովորողների հասարակական գիտակցությունը, ձևավորել նրա մոտ հայրենասիրական դիրքորոշումներ և վարքագիծ: |
| Վերջնարդյունքները |
| Գիտեն ինչ է հասարակական գիտակցությունը, արժեքները, վարքականոնը, օրինակելի անձը: Ունեն իրենց նախընտրություններն այստեղ:<br>Գիտեն հայ զինվորականի վարքականոնը: |
| Բովանդակությունը |
| Ի՞նչ է անձ, քաղաքացի և հասարակություն<br>Հասարակական գիտակցություն:<br>Արժեքներ, վարքականոն, օրինակելի անձ:<br>Հայ զինվորականի վարքականոնը: |

| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
|---|---|
| Հայ պատմական հերոսների և հակահերոսների կերպարների խմբային ուսումնասիրում և ներկայացում: Բացատրել, թե որն էր նրանց արժեքները, որը՝ վարքականոնը և ով է նրանցից արժանի լինելու վարքային մոդել (օրինակելի անձ): | Հասարակական գիտակցություն, հայրենասիրություն,<br><br>Արժեքներ, վարքականոն, օրինակելի անձ: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br><br>Հայ գրականություն: Պատմավեպեր և պատմական-հերոսական թեմաներով այլ ստեղծագործություններ՝ հայկական էպոս, առասպելներ, պոեմներ. . .<br><br>Հասարակագիտություն: Անձ, քաղաքացի և հասարակություն, հասարակական գիտակցություն, արժեքներ, վարքականոն, օրինակելի անձ (վարքային մոդել):<br><br>Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն: Ծանոթ լինեն Հին աշխարհի, միջնադարի և նոր ժամանակների պատերազմների պատմությանը, հերոսների և դավաճանների վարքագծին և նրանց գործունեության հետևանքներին: |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
| 1,2,18,22,24,26,31,32,33,34,35,36,37,39,40,41,42,43 |

| **Թեմա 9.1.** |
|---|
| **Արտակարգ իրավիճակներ: Վտանգ, ռիսկ, խոցելիություն: (1 ժամ)** |
| Նպատակը |
| Կարողանալ ճիշտ գնահատել արտակարգ իրավիճակները՝ հաշվի առնելով վտանգներն ու դրանցով պայմանավորված ռիսկերն ու խոցելիությունը: |
| Վերջնարդյունքները |
| Պատկերացնում են վտանգավոր երևույթները և կարող են նկարագրել դրանք: |

<table>
<tr><td colspan="2">Ծանոթ են վտանգավոր երևույթների ազդեցություններին:<br><br>Գիտեն վտանգավոր  երևույթների էությունը, ազդեցության հետևանքները:<br><br>Կարողանում են ներկայացնել արտակարգ իրավիճակների կանխման, դրանց ազդեցության մեղմացման կամ հետևանքների վերացման միջոցառումները:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակությունը</td></tr>
<tr><td colspan="2">Արտակարգ իրավիճակ: Արտակարգ իրավիճակների դասակարգումը:<br><br>Վտանգ: Ռիսկ: Խոցելիություն:</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Դիտել տեսաֆիլմ՝ տարատեսակ արտակարգ իրավիճակների վերաբերյալ: Կազմակերպել քննարկում:</td><td>Վտանգավոր  երևույթներ, արտակարգ իրավիճակներ:<br><br>Ռիսկեր, խոցելիություն<br><br>Անվտանգություն</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br><br>Բնագիտություն, Աշխարհագրություն: Բնական պայմաններ:Երկրակեղևի կառուցվածքը: Երկրաշարժեր, սողանքներ, քարաթափումներ: Մթնոլորտային տեղումներ․ սելավներ, ջրհեղեղ, մրրիկ, ձնաբուք, ձյունահյուսեր:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">1,2,4,7,8,9,10,11,12,15,16,17,18,22,23,24,28,29,30,31,34,48,49,50,52</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Թեմա 9.2.</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Բնածին արտակարգ իրավիճակներ: Բնակչության վարքի կանոնները: (2 ժամ)</td></tr>
</table>

| Նպատակը | |
|---|---|
| Կարողանալ ճիշտ արձագանքել բնածին արտակարգ իրավիճակներին, գործել արագ և ճիշտ, մնալ կենդանի և անվնաս: | |
| **Վերջնարդյունքները** | |
| Պատկերացնում են արտակարգ իրավիճակները և կարող են նկարագրել դրանք:<br>Ծանոթ են բնածին արտակարգ իրավիճակների ժամանակ հնարավոր վտանգներին:<br>Գիտեն բնածին արտակարգ  իրավիճակներում վարքի կանոնները:<br>Կարողանում են իրականացնել տարհանում՝ պահանջվող ժամանակում: | |
| **Բովանդակությունը** | |
| Բնածին արտակարգ իրավիճակներ. երկրաշարժեր, անտառային հրդեհներ, սողանքներ, փլուզումներ, քարաթափումներ, սելավներ, ջրհեղեղ, մրրիկ, ձնաբուք, ձնահյուսեր, համաճարակ:<br>Բնակչության վարքի կանոնները բնածին արտակարգ իրավիճակներում: | |
| **Գործնական աշխատանքներ** | **Ընդհանրական գաղափարներ** |
| Դիտել տեսաֆիլմ՝ բնածին արտակարգ իրավիճակների վերաբերյալ: Կազմակերպել քննարկում:<br>Անցկացնել հրահանգավորում՝ երկրաշարժի դեպքում գործողությունների վերաբերյալ:<br>Անցկացնել ուսումնական տագնապ և անձնակազմի տարհանում՝ ֆիքսելով ժամանակը: | Աղետներ, բնածին արտակարգ իրավիճակներ:<br>Վարքի կանոններ:<br>Համագործակցություն:<br>Տարհանում: |
| **Միջառարկայական կապեր** | |
| Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br>Ես և շրջակա աշխարհը: Բնագիտություն, Աշխարհագրություն: Երկրակեղևի կառուցվածքը: Երկրաշարժեր, սողանքներ, | |

| | |
|---|---|
| քարաթափումներ: Բնական ռեսուրսներ: Մթնոլորտային տեղումներ․ սելավներ, ջրհեղեղ, մրրիկ, ձնաբուք, ձնահյուսեր: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 1,2,4,5,7,8,9,10,11,15,16,18,22,23,24,28,30,31,34,47,48,49,50,52 | |
| **Թեմա 9.3.** | |
| **Կենսապահովումն արտակարգ իրավիճակներում: Ջերմության ապահովումը: (1 ժամ)** | |
| Նպատակը | |
| Կարողանալ արտակարգ իրավիճակներում պահպանել օրգանիզմի համար անհրաժեշտ ջերմությունը՝ չմրսելու, չցրտահարվելու և արդյունավետ գործելու համար: | |
| Վերջնարդյունքները | |
| Կարող են արտակարգ իրավիճակում փոքրացնել մարմնի ջերմության կորուստները:<br>Կարող են ստանալ կրակ և պահպանել այն:<br>Գիտեն բնածին արտակարգ իրավիճակներում վարքի կանոնները:<br>Գիտեն հակահրդեհային անվտանգության կանոնները և կարող են իրականացնել համապատասխան միջոցառումներ: | |
| Բովանդակությունը | |
| Նախապատրաստական աշխատանքներ:<br>Ջերմության կորստի սահմանափակում:<br>Ջերմության ստացում շարժողական վարժությունների, շփումների միջոցով, հատուկ սննդի օգնությամբ և կրակից:<br>Կրակի ստացումը և պահպանումը: Անվտանգության միջոցառումներ: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Խարույկից անվտանգության ապահովումը տեղանքում: | Կենսապահովում: |

| | |
|---|---|
| | Համալիր մոտեցում:<br>Կրակ: Անվտանգություն: |

| |
|---|
| Միջառարկայական կապեր |
| Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերն արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br><br>Բնագիտություն, Աշխարհագրություն: Մթնոլորտային տեղումներ․ սելավներ, ջրհեղեղ, մրրիկ, ձնաբուք, ձյունահյուսեր: Անվտանգությունը:<br><br>Ֆիզիկա: Ջերմություն, ջերմության կորուստ: Շփման ջերմություն: Ջերմակայունություն: Ջերմամեկուսիչ նյութեր:<br><br>Կենսաբանություն: Մրսածություն, ցրտահարություն: Այրվածքներ: Անվտանգության միջոցառումները:<br><br>Քիմիա: Շմոլ գազ: Ճարպեր (սնունդ): |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
| 1,2,5,7,9,10,18,26,27,28,34,46,47,48,49,50,52 |

| **Թեմա 10.1.** |
|---|
| **Թեմա 1. Առաջին օգնության հիմնադրույթներ (1 ժամ):** |
| Նպատակը |
| Առաջին օգնության (ԱՕ) խնդիրները, ծավալը և գնահատումը:<br><br>Առաջին օգնություն ցուցաբերողի իրավունքները և պարտականությունները: Դեպքի վայրը և տուժածը իրավական տեսանկյունից:<br><br>Դեպքի վայրի գնահատումը և վերլուծությունը: Տուժածների զննումը և վիճակի գնահատումը բարդ իրավիճակներում, վնասվածքների նախնական ախտորոշումը (ախտորոշում, գերախտորոշում), առաջին օգնության հերթականության ընտրությունը (պլանը), տեսակավորումը (տրիաժ), շտապ դուրսբերումը և տեղափոխումը:<br><br>Տարհանման միջոցառումները արտակարգ իրավիճակներում: Տարհանման նպատակները, ձևերը: |

<table>
<tr><td colspan="2">Տուժածների հետ վարվելակերպի և առաջացող հոգեբանական խնդիրների լուծման ճանապարհները</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքները</td></tr>
<tr><td colspan="2">Ներկայացնել առաջին օգնության նպատակները, խնդիրներն ու յուրահատկությունները:<br>Գնահատել դեպքի վայրը: Հայտնաբերել տուժածին առաջին օգնության ցուցաբերմանը խանգարող հանգամանքները և որոշել դրանց հաղթահարման ուղիները:<br>Իրականացնել տուժածների առաջնային և երկրորդային զննումը, վիճակի գնահատումը, առաջին օգնության ցուցաբերումը, տեսակավորումը և տեղափոխումը: Որոշել տուժածների տեղափոխման առաջնահերթությունը և հերթականությունը:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակությունը</td></tr>
<tr><td colspan="2">Առաջին օգնության (ԱՕ) նպատակը, խնդիրները: ԱՕ ցուցաբերողի պարտականությունները:<br>Հրատապ գործողությունների փուլերը: Անվտանգության ապահովումը:<br>Տուժածի առաջնային և երկրորդային զննումը:</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Իրավիճակի մոդելավորում և հրատապ գործողությունների փուլերի խաղարկում:<br>Պայմանական տուժածի զննում. գիտակցություն, սրտի աշխատանք, շնչառություն, ջերմաստիճանի ստուգում:</td><td>Իրավիճակի գնահատում,<br>Մոդելավորում և փորձարարություն (իրավիճակի խաղարկում)</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br>Կենսաբանություն: Գիտակցություն, ճնշում, սրտի աշխատանք, մարմնի նորմալ ջերմություն: Վնասվածքներ և վերքեր:</td></tr>
</table>

| |
|---|
| Արյունահոսություն: Այրվածքներ: <br> Քիմիա: Շմոլ գազ: Ճարպեր (սնունդ): |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
| 1,2,7,9,10,18,23,24,28,30,34,43,48,49,52 |

| | |
|---|---|
| **Թեմա 10.2** | |
| **Վարակիչ հիվանդությունների կանխարգելումը (1 ժամ)** | |
| Նպատակը | |
| Կանխարգելել վարակիչ հիվանդությունները դաշտային պայմաններում՝ սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմամբ: | |
| Վերջնարդյունքները | |
| Կարող են նկարագրել սուր-վարակիչ հիվանդությունները: <br> Գիտեն դաշտային պայմաններում վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու նպատակով կիրառվող սանիտարահիգենիկ կանոնները: <br> Պարզագույն իրավիճակներում կարող են ցուցաբերել առաջին օգնություն: | |
| Բովանդակությունը | |
| Վարակիչ հիվանդությունների կանխարգելումը: <br> Սանիտարահիգիենիկ կանոնների պահպանումը դաշտային պայմաններում: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Մանրէազերծված բինտից կամ մառլյայից շնչառական դիմակի պատրաստում: | Կանխարգելում |
| Միջառարկայական կապեր | |
| Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և | |

համոզիչ:

Կենսաբանություն: Վարակիչ հիվանդություններ: Հարուցիչներ: Կանխարգելումը:

| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
|---|
| 1,2,7,9,10,18,23,24,28,30,34,43,48,49,50,52 |

| **Թեմա 10.3** | |
|---|---|
| ***Թեմա 3. Վիրակապական նյութեր և վիրակապեր (2 ժամ):***<br>- Վիրակապումը բինտային վիրակապով<br>- Վիրակապումը եռանկյունաձև վիրակապով և «պարսատիկներով»: | |
| **Նպատակը** | |
| Գիտենան<br>Վիրակապման տեսակները: Ստանդարտ և հանպատրաստից սարքած վիրակապական նյութերի տեսակները: Վիրակապման նպատակները և հիմնական սկզբունքները: Վիրակապերի տեսակները և տեղադրման կանոնները:<br>Վիրակապումը բինտային վիրակապով և ձեռքի տակ եղած միջոցներով (եռանկյունաձև վիրակապ, պարսատիկներ և այլն): | |
| **Վերջնարդյունքները** | |
| **Կարողանա կ**ատարել վիրակապման ձևի ճիշտ ընտրություն և վիրակապել վնասված մարմնամասը:<br>Իրականացնել վիրակապում բինտային վիրակապով և ձեռքի տակ եղած միջոցներով (եռանկյունաձև վիրակապ, պարսատիկներ և այլն):<br>Ստուգել վիրակապված վերջույթի արյան շրջանառությունը: | |
| **Բովանդակությունը** | |
| - Վիրակապումը բինտային վիրակապով<br>- Վիրակապումը եռանկյունաձև վիրակապով և «պարսատիկներով»: | |
| **Գործնական աշխատանքներ** | **Ընդհանրական գաղափարներ** |
| - Վիրակապում բինտային վիրակապով | Վիրակապում |

| | |
|---|---|
| - Վիրակապում եռանկյունաձև վիրակապով և «պարսատիկներով»: | |
| **Միջառարկայական կապեր** | |
| **Հայոց լեզու:** Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ: | |
| **Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ** | |
| 1,2,7,9,10,18,23,24,28,30,34,43,48,49,50,52 | |

9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Առաջարկվում է 34 ԺԱՄ)

| Բաժին | Թեմա | Ժամաքանակ | Հիմնական գաղափարներ |
|---|---|---|---|
| 1. Ռազմարվեստի պատմություն․<br>ՀՀ Զինված ուժեր | 1.1. Հայկական բանակի ռազմավարությունն ու մարտավարությունը Հին դարաշրջանում | 2 | Հայրենասիրական դաստիարակություն,<br>Մարտական պատրաստության հիմունքներ |
| 2. Մարտավարության հիմունքներ | 2.1. Մարտավարական հնարքներ | 2 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 3. Մարտավարական-ֆիզիկական պատրաստություն | 3.1. Մարտական իրավիճակին համապատասխան հրաձգային դիրքավորում: | 3 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| | 3.2. Հրաձգության սեկտորի փոփոխումը կայուն դիրքավորումներում: | 2 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 4. Կրակային պատրաստություն | 4.1. Զինվորի հիմնական զենքը | 7 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 5. Ինժեներական պատրաստության | 5.1. Զինվորի ամրաշինական գործունեությունը: | 2 | Մարտական պատրաստությա |

| | | | |
|---|---|---|---|
| հիմունքներ | | | ն հիմունքներ |
| 6. Ռազմական տեղագրության<br>հիմունքներ | 6. 1. Տեղագրական քարտեզ | 1 | Մարտական պատրաստությա ն հիմունքներ |
| | 6.2. Տեղաշարժ տեղանքում | 3 | Մարտական պատրաստությա ն հիմունքներ |
| 7. Իրավական պատրաստություն | 7.1. ՀՀ ԶՈՒ կանոնադրություն: Պետեր և ենթականեր: Ավագներ և կրտսերներ: Հրաման և կարգադրություն: | 1 | Հայրենասիրակա ն դաստիարակությ ուն,<br>Մարտական պատրաստությա ն հիմունքներ |
| | 7.2. Միջազգային մարդասիրական իրավունք (ՄՄԻ): Բժիշկների, հոգևորականների, միջազգային մարդասիրական կառույցների ներկայացուցիչների  անձեռնմխելիությունը զինված ընդհարումների ժամանակ: | 1 | Հայրենասիրակա ն դաստիարակությ ուն,<br>Մարդասիրությու ն,<br>Մարտական պատրաստությա ն հիմունքներ |
| 8.  Շարային պատրաստություն | 8.1. Շարային վարժանքներն ու շարժումն առանց զենքի | 2 | Մարտական պատրաստությա ն հիմունքներ |

| | | | |
|---|---|---|---|
| 9. Հոգեբանական պատրաստություն | 9.1. Փոխհարաբերությունը զինվորական կոլեկտիվում | 1 | Հայրենասիրական դաստիարակություն,<br>Մարտական պատրաստության հիմունքներ |
| 10. Անվտանգ կենսագործունեություն և կենսապահովում | 10.1. Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներ կոմունալ-կենցաղային համակարգում: Վարքի կանոնները: | 2 | Անվտանգ կենսագործունեություն և կենսապահովում |
| | 10.2. Կենսապահովումը արտակարգ իրավիճակներում. Ջրով ապահովումը: | 1 | Անվտանգ կենսագործունեություն և կենսապահովում |
| 11. Առաջին բուժօգնության հիմունքներ | 11.1. Վնասվածքներ: Վերքեր: Արյունահոսության դադարեցումը և վերքերի նախնական մշակումը: | 2 | Առաջին բուժօգնության հիմունքներ |
| | 11.2. Տարբեր միջատների, զեռունների խայթոցները և կենդանիների կծածները: Նախազգուշական միջոցառումները: ԱԲՕ: | 1 | Առաջին բուժօգնության հիմունքներ: |
| Ամփոփում | | 1 | |
| Ընդամենը | | 34 | |

| **Թեմա 1.1.** |
|---|
| **Հայկական բանակի ռազմավարությունն ու մարտավարությունը Հին դարաշրջանում (1 ժամ)** |

<table>
<tr><th colspan="2">Նպատակը</th></tr>
<tr><td colspan="2">Պատկերացնել, թե ինչպես էին Հին դարաշրջանում նոր զինատեսակի կիրառումը, ռազմավարական և մարտավարական մտահղացումները ազդում ճակատամարտի և պատերազմի ելքի վրա:<br><br>Ձևավորել հայրենասիրական աշխարհայացք, կարևորել մեր պատմության մեջ բանակի դերը երկրի պաշտպանության գործում:</td></tr>
<tr><th colspan="2">Վերջնարդյունքները</th></tr>
<tr><td colspan="2">Ընդհանուր գծերով կարող են նկարագրել  հին դարաշրջանում հայկական բանակի կառուցվածքը (<Զորանամակ>), բացատրել դրա դերն և նշանակությունը:<br><br>Կարող են նկարագրել Հայքի, Տիգրանակերտի, Արածանիի, Ձիրավի, Ներսեհապատի ճակատամարտերում, ինչպես նաև Հին աշխարհի հայտնի զորավարների կողմից կիրառված մարտավարական հնարքները:</td></tr>
<tr><th colspan="2">Բովանդակությունը</th></tr>
<tr><td colspan="2">Հայկական բանակը հին դարաշրջանում: Զորանամակ:<br><br>Հայքի, Տիգրանակերտի, Արածանիի, Ձիրավի, Ներսեհապատի ճակատամարտերում կիրառված մարտավարական հնարքները:</td></tr>
<tr><th>Գործնական աշխատանքներ</th><th>Ընդհանրական գաղափարներ</th></tr>
<tr><td>Ուսուցչի ուղղորդմամբ անհատապես կամ ենթախմբով ինտերնետում գտնում և ուսումնասիրում են համաշխարհային ռազմարվեստի պատմությունից հայտնի՝<br><br>Հին Հունաստանի պատմություն: Տրոյական պատերազմ. <Տրոյական ձիու> մասին առասպելը:<br><br>Ալեքսանդր Մակեդոնացու մարտավարությունը դեպի Ասիա արշավանքի ժամանակ. Գավգամելայի ճակատամարտը:</td><td>Ռազմավարություն,<br><br>Մարտավարություն,<br><br>Անուղղակի գործողություններ,<br><br>Ռազմական հնարքներ:</td></tr>
</table>

| | |
|---|---|
| 2-րդ Փյունիկյան պատերազմ․ Հաննիբալի կողմից Ալպերի լեռնանցումը և Տրեբիայի ճակատամարտը:<br><br>թեմաներով նյութերը և ներկայացնում դասարանական քննարկման: | |
| Միջառարկայական կապեր | |
| Ինֆորմատիկա: Կարողանան օգտվել համակարգչից և ինտերնետի տեղեկատվական հենքերից: Կարողանան նյութի համակարգչային ներկայացում ապահովել:<br><br>Ռուսերեն (այլ օտար լեզու): Կարողանան Ինտերնետի նյութը հասկանալ, թարգմանել հայերեն:<br><br>Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br><br>Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն: Ծանոթ լինեն Հին աշխարհի պատերազմների պատմությանը: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 1,2,3,6,7,10,13,16,17,18,25,26,28,29,30,31,32,33,35,36,47,52 | |
| **Թեմա 2.1** | |
| **Մարտավարական հնարքներ (2 ժամ)** | |
| Նպատակը | |
| Ձևավորել ընդհանուր պատկերացումներ անհատական քողարկման մասին, իմանալ դրա հիմնական հատկանիշները, ձևերն ու միջոցները: | |
| Վերջնարդյունքները | |
| Գիտեն մարտավարական անհատական հիմնական հատկանիշները, ձևերն ու միջոցները:<br><br>Կարող են դրսևորել քողարկման որակներ:<br><br>Ըստ քողարկման հատկանիշների կարող են ուսումնասիրել տեղանքը՝ որոնելու և գտնելու հնարավոր քողարկված | |

| | |
|---|---|
| հակառակորդին: | |
| Բովանդակությունը | |
| Անհատական քողարկում. հիմնական հատկանիշները, ձևերն ու միջոցները:<br><br>Ռազմական խորամանկություն: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Ուսուցչի ուղղորդմամբ Ինտերնետից գտնում են տեսաֆիլմեր բնության մեջ կենդանական աշխարհի ներկայացուցիչների քողարկման մասին:<br><br>Ծանոթանում են տարբեր տեղանքների, եղանակային պայմանների համար նախատեսված քողարկիչ համազգեստների հետ:<br><br>Տեղանքում քողարկվում են առձեռն միջոցներով (խոտ, տերևներ, հող և այլն) | Անհատական,<br><br>Քողարկում,<br><br>Ռազմական խորամանկություն: |
| Միջառարկայական կապեր | |
| Ինֆորմատիկա: Կարողանան օգտվել համակարգչից և ինտերնետի տեղեկատվական հենքերից: Կարողանան նյութի համակարգչային ներկայացում ապահովել:<br><br>Ռուսերեն (այլ օտար լեզու): Կարողանան Ինտերնետի նյութը հասկանալ, թարգմանել հայերեն:<br><br>Հայոց լեզու: Կարողանա կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր գաղափարները: Կարողանա իր մտքերը արտահայտել գրավոր և բանավոր եղանակով, այնպես, որ խոսքը համապատասխանի լսարանին:<br><br>Կենսաբանություն: Կենդանական աշխարհի ներկայացուցիչների քողարկումը բնության մեջ: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 1,2,3,4,5,6,7,8,9,10,13,24,25,26,28,29,30,32,33,35,48,49,52 | |
| **Թեմա 3.1.** | |
| **Մարտական իրավիճակին համապատասխան հրաձգային դիրքավորում (4 ժամ)** | |
| Նպատակը | |

<table>
<tr><td colspan="2">Մարտական իրավիճակում հմտորեն տիրապետել զենքին, արագ գալ պահանջվող մարտական դիրքավորման:<br>Հրաձգության մի կայուն դիրքավորումից հմտորեն անցնել մեկ այլ դիրքավորման՝ կախված մարտական իրավիճակից:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքները</td></tr>
<tr><td colspan="2">Գիտեն մարտական պայմաններում ինքնաձիգը կրելու առանձնահատկությունները և տիրապետում են դրա հիմնական ձևերին:<br><br>Հմտորեն իրականացնում են անցում ինքնաձիգով կանգնած նախամարտական դիրքավորումից մարտական դիրքավորման:<br><br>Կարողանում են հմտորեն հրաձգության մի դիրքավորումից անցնել մեկ այլ դիրքավորման:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակությունը</td></tr>
<tr><td colspan="2">Մարտական պայմաններում ինքնաձիգի դիրքը: Ինքնաձիգով նախամարտական դիրքավորումից անցում մարտական դիրքավորման:<br><br>Անցում կանգնած դիրքավորումից ծնկած դիրքավորման:<br><br>Անցում կանգնած դիրքավորումից պառկած դիրքավորման:<br><br>Անցում ծնկած դիրքավորումից պառկած դիրքավորման:<br><br>Անցում ծնկած և պառկած դիրքավորումից կանգնած դիրքավորման:</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Ուսումնասիրել համապատասխան տեսադասերը:<br><br>Անցկացնում են գործնական վարժանքներ տվյալ թեմայով: Վարժանքները սկզբում անել առանց զենքի, հետո միայն զենքով (դրա նմանակիչով):</td><td>Կարողություն, հմտություն,<br><br>Անվտանգություն, պաշտպանվածություն:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">Հայոց լեզու: Կարողանան նյութը ընկալել, յուրացնել:<br><br>Ֆիզկուլտուրա: Նախավարժանք: Աշակերտների ֆիզիկական որակների զարգացում․ ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, շարժումների կոորդինացիա, հավասարակշռության զգացողություն:</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Կենսաբանություն: Մարմնի անատոմիան. հենաշարժիչ, մկանաջլային, շնչառական համակարգեր: Հավասարկշռության և շարժումների կոորդինացիայի կենտրոններ (ներքին ականջ, ուղեղիկ):<br><br>Ֆիզիկա: Հավասարակշռություն, շարժումների կոորդինացիա: Կայունություն, ծանրության կենտրոն: Իներցիա: Պտտական շարժում: Ուժի բազուկ: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 1,9,33,34,49,52 | |
| **Թեմա 3.2** | |
| **Հրաձգության սեկտորի փոփոխումը կայուն դիրքավորումներում (1 ժամ)** | |
| Նպատակը | |
| Մարտական իրավիճակում պահովել սեփական անվտանգությունը և իրականացնել մարտական խնդիրը մարտադաշտի տվյալ տեղամասում:<br><br>Մարմնի հմուտ շարժումով փոխել հրաձգության սեկտորը տարբեր դիրքավորումներում՝ կախված մարտական իրավիճակից: | |
| Վերջնարդյունքները | |
| Ցուցադրում են հմտություններ՝ մարմնի դիրքը արագ փոխելու ուղղությամբ: Կարողանում են ինքնաբերաբար փոխել հրաձգության սեկտորը կանգնած և ծնկած դիրքավորման ժամանակ տարբեր ուղղություններով՝ կախված հրահանգչի (զինղեկի) հրահանգից: | |
| Բովանդակությունը | |
| Հրաձգության սեկտորի փոփոխումը կանգնած դիրքավորման ժամանակ (աջ, ձախ, հետ):<br><br>Հրաձգության սեկտորի փոփոխումը ծնկած դիրքավորման ժամանակ (աջ, ձախ, հետ): | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |

| | |
|---|---|
| Ուսումնասիրել համապատասխան տեսադասերը:<br>Անցկացնում են գործնական վարժանքներ տվյալ թեմայով՝ յուրացնելով դրանք մինչև հմտություն: Վարժանքը սկզբում անել առանց զենքի, հետո միայն զենքով (դրա նմանակիչով): | Սեկտոր,<br>Դիրքավորում,<br>Կարողություն, հմտություն,<br>Անվտանգություն, պաշտպանվածություն: |

| |
|---|
| Միջառարկայական կապեր |
| Հայոց լեզու: Կարողանան նյութը ընկալել, յուրացնել:<br>Ֆիզկուլտուրա: Նախավարժանք: Աշակերտների ֆիզիկական որակների զարգացում․ ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, շարժումների կոորդինացիա, հավասարակշռության զգացողություն:<br>Կենսաբանություն: Մարմնի անատոմիան․ հենաշարժիչ, մկանաջլային, շնչառական համակարգեր: Հավասարկշռության և շարժումների կոորդինացիայի կենտրոններ (ներքին ականջ, ուղեղիկ):<br>Ֆիզիկա: Հավասարակշռություն, շարժումների կոորդինացիա: Կայունություն, ծանրության կենտրոն: Իներցիա: Պտտական շարժում: Ուժի բազուկ: Անկյունային արագացում: |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
| 1,9,33,34,49,52 |

| **ԹԵՄԱ 4.1** |
|---|
| **Հրաձիգի հիմնական զենքը  (7 ժամ)** |
| Նպատակը |
| Պատկերացնել կրակոցի երևույթը:<br>Իմանալ ՀՀ ԶՈՒ-ում հրաձիգի հիմնական զենքի՝ AKM (AK-74) ինքնաձիգի հիմնական մարտավարական-տեխնիկական բնութագրերը,  կառուցվածքը, պահպանման կանոնները, հրաձգության առանձնահատկությունները: Տիրապետել նշանառության կանոններին: Ձեռք բերել ինքնաձիգից կրակ վարելու գործողությունների  որոշակի հմտություններ:<br>Իմանալ ինքնաձիգի փամփուշտների կառուցվածքը, ըստ նշանակության դրա հիմնական տիպերը, կարողանալ լիցքավորել |

և լիցքաթափել փամփշտատուփը:

Հստակ տիրապետել մարտի դաշտում զենքի հետ վարման անվտանգության կանոններին:

## Վերջնարդյունքները

Կարող են թվարկել ՀՀ ԶՈւ-ում կիրառվող հրաձգային զենքի հիմնական տեսակները՝ տալով դրանց նշանակությունը:

Գիտեն АКМ (АК-74) ինքնաձիգի մասերի ու մեխանիզմների նշանակությունն ու աշխատանքը, դրա հիմնական մարտավարական-տեխնիկական բնութագրերը, գիտեն դրա պահպանման կանոնները:

Գիտեն ինքնաձիգի հետ վարվելու անվտանգության կանոնները:

Կարող են ըստ նորմատիվների ինքնաձիգը ոչ լրիվ քանդել-հավաքել:

Գիտեն ինքնաձիգի փամփուշտների ընդհանուր կառուցվածքը և հիմնական տիպերը:

Կարող են ինքնաձիգի փամփշտատուփը քանդել-հավաքել, այն լիցքավորել ու լիցքաթափել:

Պատկերացնում են կրակոցի երևույթը: Գիտեն ինչ է <ուղիղ կրակոցը>, պատսպարված, խոցելի և «մեռյալ» տեղամասերը:

Որոշակի տիրապետում են նշանառության միատեսակության ապահովման հմտություններին:

## Բովանդակությունը

ՀՀ ԶՈւ-ում կիրառվող ինքնաձիգների տեսակները, դրանց մարտավարական-տեխնիկական բնութագրերը:

АКМ (АК-74) ինքնաձիգի մասերի ու մեխանիզմների նշանակությունն ու աշխատանքը: Ինքնաձիգի հետ վարվելու անվտանգության կանոնները:

АКМ (АК-74) ինքնաձիգի ոչ լրիվ քանդելն ու հավաքելը: Ինքնաձիգի մաքրումը և պահպանումը:

Հրաձգային զենքի փամփուշտների ընդհանուր կառուցվածքը և հիմնական տիպերը: Ինքնաձիգի փամփշտատուփի քանդելն ու հավաքելը, լիցքավորելն ու լիցքաթափելը (գործնական վարժանքներ):

Կրակոցի երևույթը. ներքին և արտաքին բալիստիկա: Հետհարված:

Ուղիղ կրակոց: Պատսպարված, խոցելի և «մեռյալ» տարածություններ:

ինքնաձիգից կրակ վարելու եղանակները և միօրինակ նշանառման հմտությունների զարգացումը:

<table>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Ինքնաձիգը ոչ լիվ քանդել-հավաքել ըստ նորմատիվների:<br><br>Փամփշտատուփը քանդել-հավաքել, լիցքավորել-լիցքաթափել ըստ նորմատիվների:</td><td>Պատկերացումներ-գիտելիքներ-կարողություններ-հմտություններ,<br><br>Անվտանգություն:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">Ֆիզկուլտուրա: Ֆիզիկական որակներ՝ ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա:<br><br>նախավարժանք, ճիշտ (<փորով>) շնչառություն, շնչառական վարժանքներ:<br><br>Կենսաբանություն: Մարմնակազմություն՝ հենաշարժողական համակարգ, մկանային համակարգ, ջլեր: Շնչառական համակարգ, շնչառություն ստոծանիով (<փորով>): Հավասարակշռության և շարժումների կոորդինացիան կազմակերպող օրգաններ. ներքին ականջ և ուղեղիկ:<br><br>Ֆիզիկա: Հավասարակշռություն, ծանրության կենտրոն, կայունություն, պտտական շարժում, պտտման առանցք, գլորում, իներցիա, հետհարված:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">1,3,4,6,9,10,28,30,33,48,49,52</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Թեմա 5.1.</td></tr>
<tr><td colspan="2" align="center">Զինվորի ամրաշինական գործունեությունը (2 ժամ)</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">Լինել պաշտպանված մարտի դաշտում՝ հրաձիգների համար կրակի վարման կառույցների սարքավորման շնորհիվ:</td></tr>
</table>

<table>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքները</td></tr>
<tr><td colspan="2">Կարող են ձևավորել (փորել) զինվորի անհատական խրամատ:<br><br>Կարող են ներկայացնել խրամատի հողապատնեշի կառուցապատման և քողարկման պահանջները, դրա իրականացման ձևերն ու միջոցները:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակությունը</td></tr>
<tr><td colspan="2">Անհատական խրամատ: Հողապատնեշի կառուցապատման և անհատական խրամատի քողարկման խնդիրներ:<br><br>Անհատական կրակային դիրքի կառուցապատումը և քողարկումը լեռնային-անտառաթփուտային տեղանքում:</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Փորել անհատական խրամատի փոքրաչափս մակետ:<br><br>Ընտրել անհատական կրակակետ կտրտված, անտառապատ տեղանքում, կառուցապատել և քողարկել այն առձեռն միջոցներով:</td><td>Պատկերացումներ-գիտելիքներ-կարողություններ-հմտություններ,<br><br>Անվտանգություն․ պաշտպանվածություն-քողարկում:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">Ֆիզկուլտուրա: Ֆիզիկական որակներ՝ ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա:<br><br>նախավարժանք, ճիշտ (<փորով>) շնչառություն, շնչառական վարժանքներ:<br><br>Աշխարհագրություն: Բնագիտություն: Տեղանք: Տեղանքի տեսակները և բնութագրերը: Հողային կազմը:<br><br>Ֆիզիկա: Գնդի հարված պինդ մակերեսին, մարում, անդրադարձում, շեղում, շեղման անկյուն․ նյութի խտություն, իներցիա, հետհարված, շփում, շփման մակերես, շփման ուժ:</td></tr>
</table>

| |
|---|
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
| 1,2,3,4,5,6,7,9,27,28,31,33,48,49,52 |

| | |
|---|---|
| **Թեմա 6.1.** | |
| **Տեղագրական քարտեզ (1 ժամ)** | |
| Նպատակը | |
| Կարողանալ կարդալ տեղագրական քարտեզը և կողմնորոշել այն տվյալ տեղանքում: | |
| Վերջնարդյունքները | |
| Գիտեն տեղագրական քարտեզը՝ որպես կոնկրետ տեղանքի մակետ՝ ըստ կոնկրետ մասշտաբների:<br>Կարողանում են առանձնացնել բնական և արհեստական առարկաների պայմանական նշանները:<br>Կարողանում են տեղանքում կողմնորոշել տեղագրական քարտեզը: | |
| Բովանդակությունը | |
| Տեղագրական քարտեզ: Մասշաբ, պայմանական նշաններ: Տեղագրական քարտեզի կողմնորոշումը: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Սովորել տեղանքի առարկաների պայմանական նշանները:<br>Տեղագրական քարտեզի վրա նշված պայմանական նշաններին (անտառի, կամուրջի բնութագրեր) տալ բացատրություն: | Տեղանք,<br>Քարտեզ,<br>Մակետ,<br>Մասշտաբ: |
| Միջառարկայական կապեր | |
| Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ: | |

| |
|---|
| Բնագիտություն: Աշխարհագրություն: Երկիր, հորիզոնի կողմեր, աշխարհագրական և մագնիսական բևեռներ, հասարակած, միջօրեականներ և զուգահեռականներ, երկայնություն և լայնություն, կոորդինատներ, միավորներ, տեղանք, ռելիեֆ, տեղանքի առարկաներ, տեղագրական քարտեզ, պայմանական նշաններ, քարտեզի կողմնորոշում: |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
| 1,2,3,4,5,6,7,9,10,25,28,29,30,31,33,48,49,52 |

| **Թեմա 6.2.** | |
|---|---|
| **Տեղաշարժ տեղանքում (3 ժամ)** | |
| Նպատակը | |
| Կարողանալ տեղաշարժվել տեղանքում՝ ունենալով որոշակի կողմնորոշիչներ և դրանց մագնիսական ազիմուտները: | |
| Վերջնարդյունքները | |
| Գիտեն ինչ է կողմնորոշիչ, ինչ է ազիմուտ (մագնիսական ազիմուտ):<br><br>Կարող են որոշել տեղանքի կոնկրետ առարկայի մագնիսական ազիմուտը կողմնացույցով (սմարթֆոնով):<br><br>Կարող են որոշել տեղանքի առարկայից եղած հեռավորությունը տարբեր եղանակներով (կուրվիմետրով և կարկինով չափել տեղագրական քարտեզի վրա, չափել մաթեմատիկական մեթոդներով, հազարերորդականի բանաձևով, աչքաչափով, կարող են չափել անցած հեռավորությունը զույգ քայլերի օգնությամբ):<br><br>Կարող են կազմել տեղանքում տեղաշարժի երթուղու սխեման ըստ շրջադարձային կողմնորոշիչների, դրանց մագնիսական ազիմուտների և եղած հեռավորությունների, տեղաշարժվել դրանցով՝ ընտրելով նաև միջանկյալ կողմնորոշիչներ: | |
| Բովանդակությունը | |
| Կողմնորոշիչներ: Ազիմուտ: Տեղանքի առարկայի մագնիսական ազիմուտի որոշումը կողմնացույցով (սմարթֆոնով):<br><br>Հեռավորության որոշման եղանակներն ու ձևերը:<br><br>Ազիմուտով շարժվելը տեղանքում: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական |

| | |
|---|---|
| | գաղափարներ |
| Չափել կողմնացույցով (սմարթֆոնով) տեղանքի որևէ առարկայի մագնիսական ազիմուտը:<br><br>Հաշվարկել մինչև տեղանքի որևէ առարկան ընկած հեռավորությունը աչքաչափով, հազարերրորդականի բանաձևով:<br><br>Զույգ քայլերով չափել 100 մ տարածությունը և ճշտել զույգ քայլի մեծությունը:<br><br>Տեղանքի քարտեզի վրա, որևէ երթուղու գծով, ընտրել կոմնորոշիչներ, հաշվարկել դրանց մագնիսական ազիմուտները: Կուրվիմետրով և կարկինով տեղագրական քարտեզի վրա չափել դրանց միջև հեռավորությունը: Կազմել տեղաշարժի սխեմա՝ կողմնորոշիչներով, դրանց մագնիսկան ազիմուտներով և հեռավորություններով: Տեղաշարժվել այս սխեմայով՝ ուղղությունը պահելու համար օգտագործել կողմնացույց (սմարթֆոն), իսկ հեռավորությունը չափել զույգ քայլելով: | Կողմնորոշում,<br><br>Ազիմուտ,<br><br>Տեղաշարժ: |

| |
|---|
| Միջառարկայական կապեր |
| Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br><br>Բնագիտություն: Աշխարհագրություն: Երկիր, հորիզոնի կողմեր, աշխարհագրական և մագնիսկան բևեռներ, հասարակած, միջօրեականներ և զուգահեռականներ, երկայնություն և լայնություն, կոորդինատներ, միավորներ, տեղանք, ռելիեֆ, տեղանքի առարկաներ, տեղագրական քարտեզ, պայմանական նշաններ, քարտեզի կողմնորոշում, հիմնական և միջանկյալ կողմնորոշիչներ, ազիմուտ, մագնիսական ազիմուտ: |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
| 1,2,3,4,5,6,7,9,10,25,28,29,30,31,33,48,49,52 |

| |
|---|
| **Թեմա 7.1.** |
| **ՀՀ ԶՈՒ կանոնադրություն. Պետեր և ենթականեր: Ավագներ և կրտսերներ: Հրաման և կարգադրություն (1 ժամ)** |
| Նպատակը |
| Պատկերացնել բանակային կարգ ու կանոնը, հասկանալ դրա կարևորությունը: |

<table>
<tr><th colspan="2">Վերջնարդյունքները</th></tr>
<tr><td colspan="2">Կարողանում են տարբերել պետեր-ենթականեր, ավագներ-կրտսերներ ըստ պաշտոնների և կոչումների:<br><br>Գիտեն ի՞նչ է հրամանը և ի՞նչ է կարգադրությունը:</td></tr>
<tr><th colspan="2">Բովանդակությունը</th></tr>
<tr><td colspan="2">ՀՀ ԶՈՒ կանոնադրություն. Պետեր և ենթականեր: Ավագներ և կրտսերներ: Հրաման և կարգադրություն:</td></tr>
<tr><th>Գործնական աշխատանքներ</th><th>Ընդհանրական գաղափարներ</th></tr>
<tr><td>Զինղեկը ներկայացնում է տարբեր պաշտոններով և զինվորական կոչումներով անձանց վերաբերյալ տվյալներ, իսկ սովորողները որոշում են դրանցից ո՞վ է պետ և ո՞վ ենթակա, ո՞վ է ավագ և ո՞վ՝ կրտսեր:</td><td>Կանոնակադրություն, կանոնադրական նորմ,<br><br>Իրավունքներ և պարտականություններ,<br><br>Կառավարում, ենթակայություն:</td></tr>
<tr><th colspan="2">Միջառարկայական կապեր</th></tr>
<tr><td colspan="2">Հայոց լեզու: Կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր գաղափարները: Մտքերն արտահայտել գրավոր և բանավոր եղանակով, տրամաբանված:<br><br>Հասարակագիտություն: Հասարակական փոխհարաբերություններ: Իրավունքներ և պարտականություններ: Կառավարման <վերևից՝ ներքև> ուղղածիգ մոդել:</td></tr>
<tr><th colspan="2">Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ</th></tr>
<tr><td colspan="2">1,2,3,24,28,31,36,38,39,42</td></tr>
</table>

## **Թեմա 7.2**

| **Միջազգային մարդասիրական իրավունք (ՄՄԻ).**<br>**Բժիշկների, հոգևորականների, միջազգային մարդասիրական կառույցների ներկայացուցիչների անձեռնմխելիությունը զինված ընդհարումների ժամանակ (1 ժամ)** | |
|---|---|
| Նպատակը | |
| Սերմանել հստակ, իրավական և բարոյական տեսանկյունից ճիշտ դիրքորոշումներ ընդհարումների ժամանակ մարտադաշտում հայտնված որոշ կատեգորիայի մարդկանց նկատմամբ: | |
| Վերջնարդյունքները | |
| Գիտեն, որ պատերազմի դաշտում բժիշկները, հոգևորականները, միջազգային մարդասիրական կառույցների ներկայացուցիչները պաշտպանված եմ միջազգային իրավունքի նորմերով և դրանց խախտումը կարող է բերել իրավական հետևանքների: | |
| Բովանդակությունը | |
| Բժիշկների, հոգևորականների, միջազգային մարդասիրական կառույցների ներկայացուցիչների անձեռնմխելիությունը զինված ընդհարումների ժամանակ | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Հանդիպում ՀՀ ԿԽՄԿ ներկայացուցչի հետ․ զրույց առաջադրված թեմայով: | Պատերազմ և խաղաղություն,<br>Մարդասիրությոն, կարեկցանք, խիղճ,<br>Մարդասիրական առաքելություն,<br>Միջազգային մարդասիրակա |

| | |
|---|---|
| | ն իրավունք: |
| Միջառարկայական կապեր | |
| Հայոց լեզու: Կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր գաղափարները:<br>Մտքերն արտահայտել գրավոր և բանավոր եղանակով, տրամաբանված:<br>Հասարակագիտություն: Միջազգային իրավունք: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 1,2,3,22,24,30,32,36,38,40,41,42,43,52 | |
| **Թեմա 8.1.** | |
| **Շարային վարժանքներն ու շարժումն առանց զենքի (2 ժամ)** | |
| Նպատակը | |
| Վստահ կատարել շարային վարժանքները և շարժումն առանց զենքի: | |
| Վերջնարդյունքները | |
| Կարողանում են շարային կանոնադրության համաձայն շարքից դուրս գալ և շարք վերադառնալ, զինվորական պատիվ տալ հրմանատարին (ավագին) մոտենալիս: | |
| Բովանդակությունը | |
| Շարային վարժանքներն ու շարժումն առանց զենքի:<br>Շարքից դուրս գալը և շարք վերադառնալը:<br>Զինվորական պատիվ տալն առանց զենքի՝ հրամանատարին (ավագին) մոտենալու դեպքում: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Ցուցադրել շարային վարժածները և շարժումն առանց զենքի: | Կանոնադրությու ն: |

| | |
|---|---|
| | |
| Միջառարկայական կապեր | |
| Հայոց լեզու: Կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր գաղափարները:<br>Ֆիզկուլտուրա: Շարային պատրաստություն: Շարք: Դարձումներ տեղում և ընթացքում: Շարքից դուրս գալ և շարք վերադառնալ: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 1,2,3,24,42,49,52 | |

| | |
|---|---|
| **Թեմա 9.1** | |
| **Կոնֆլիկտները և դրանց հաղթահարման մարտավարությունները (1 ժամ)** | |
| Նպատակը | |
| Պատկերացնել զինվորական կոլեկտիվում միջանձնային կոնֆլիկտների հնարավոր պատճառները, դրանից եկող վտանգները, ճանաչել դրանց հաղթահարման ուղիները: | |
| Վերջնարդյունքները | |
| Գիտեն միջանձնային կոնֆլիկտների հիմնական պատճառները, դրանց հաղթահարման ուղիները: | |
| Բովանդակությունը | |
| Միջանձնային կոնֆլիկտներ․ պատճառները և հաղթահարման ուղիները: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Զինղեկի ուղղորդմամբ Ինտերնետում որոնել և գտնել թեմայի վերաբերյալ համապատասխան տեսաֆիլմեր և դիտել: Քննարկել առաջ եկած հարցերը դասարանում: | Լիդերության ձգտում, հոգեբանական համատեղելիություն,<br>Միասնականություն,<br>Ընկերություն, կարգապահություն: |
| Միջառարկայական կապեր | |

| | |
|---|---|
| Ինֆորմատիկա: Կարողանան օգտվել համակարգչից և ինտերնետի տեղեկատվական հենքերից: Կարողանան նյութի համակարգչային Power Point ծրագրով ներկայացնել:<br>Ռուսերեն (այլ օտար լեզու): Կարողանան Ինտերնետի օտար լեզվով նյութը հասկանալ, թարգմանել հայերեն:<br>Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br>Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն: Ծանոթ լինեն տարբեր ժամանակների պատերազմների պատմությանը, մարդկային կորուստներին և տառապանքներին: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 1,2,3,7,26,30,32,36,37,38,39,40,41,42,43,50 | |
| **Թեմա 10.1.** | |
| **Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներ կոմունալ-կենցաղային համակարգում: Վարքի կանոնները: (2 ժամ)** | |
| Նպատակը | |
| Կարողանալ արագ և  ճիշտ արձագանքել ստեղծված տեխնածին արտակարգ իրավիճակին, մնալ կենդանի և անվնաս: | |
| Վերջնարդյունքները | |
| Տիրապետում են կոմունալ կենցաղային համակարգում տեխնածին արտակարգ իրավիճակներում վարքի կանոններին և կարող են ներկայացնել դրանք: | |
| Բովանդակությունը | |
| Բնակելի և ոչ բնակելի կառույցների հանկարծակի փլուզում: Վթարներ կենսապահովման կոմունալ համակարգում: Վարքի կանոնները: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Դիտել տեսաֆիլմ՝ կոմունալ կենցաղային համակարգում  տեխնածին արտակարգ իրավիճակների վերաբերյալ: Կազմակերպել քննարկում: | Աղետներ, արտակարգ իրավիճակներ: |

| | |
|---|---|
| Իրականացնել ուսումնական տարհանում դպրոցում՝ փլուզման, վթարի հետ կապված սցենարներով: Անցկացնել աշակերտական անձնակազմի նախնական իրահանգավորում, գործառույթների բաշխում, տարհանում և արդյունքների վերլուծում: | Անվտանգություն, վարքի կանոններ:<br>Համագործակցություն:<br>Տարհանում: |

| Միջառարկայական կապեր |
|---|
| Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br>Ֆիզիկա: Էլեկտրական հոսանք: Ամրություն:<br>Քիմիա: Այրում: Շմոլ գազ:<br>Կենսաբանություն: Թունավորում: |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
| 1,2,3,22,23,24,33,48,49,50,52 |

| **Թեմա 10.2.** |
|---|
| **Կենսապահովումը արտակարգ իրավիճակներում. Ջրով ապահովումը: (1 ժամ)** |
| Նպատակը |
| Կարողանալ արտակարգ իրավիճակներում պահպանել օրգանիզմի ջրային հավասարակշռությունը, կանխել ջրազրկումը, հայթհայթել խմելու համար անհրաժեշտ ջուր: |
| Վերջնարդյունքները |
| Կարող են արտակարգ իրավիճակում կանխել ջրազրկումը, պլանավորել ջրի անհրաժեշտ ծախսը:<br>Կարող են տեղանքում ջուր հայթհայթել, ֆիլտրել, տարբեր ձևերով մանրէազերծել:<br>Տիրապետում են խմելու ջրի և  հիգիենայի համար անհրաժեշտ նորմատիվային չափերին: |

| Բովանդակությունը | |
|---|---|
| Ջրի պահուստի ստեղծումը, խնայողական  օգտագործումը, հայթհայթումը, ֆիլտրումը, մանրէազերծումը:<br>Ջրի ապահովման նորմատիվային չափորոշիչները: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Զինղեկի կողմից մոդելավորվում է ջրազրկման, ջրի սուր պահանջարկի հետ կապված տարբեր իրավիճակներ, այնուհետև ենթախմբերով որոնվում է տվյալ իրավիճակը կանխարգելելու և դրանից դուրս գալու լուծումը բնության մեջ: | Վտանգ, անվտանգություն:<br>Կենսապահովում:<br>Կանխատեսում, պլանավորում, հաղթահարում: |
| Միջառարկայական կապեր | |
| Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br>Տեխնոլոգիա: Ջրի ֆիլտրում, մանրէազերծում՝ եռացման, քլորացման, յոդացման ճանապարհով:<br>Ֆիզիկա: Ջրի գոլորշիացում, եռում:<br>Կենսաբանություն: Մանրէ, վիրուս, ջրազրկում, քրտնում: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 1,2,3,4,7,9,11,33,36,47,48,50,52 | |
| **Թեմա 11.1** | |
| **Թեմա 2. Գիտակցության խանգարումներ: Անգիտակից տուժածին կողքի ապահովության դիրքի (ԿԱԴ) բերելը  (1 ժամ):** | |

<table>
<tr><td colspan="2">Նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">Իմանալ օրգանիզմի կենսագործունեությունը ապահովող ֆունկցիաների մասին:<br><br>Գիտակցության խանգարումների ձևերը, նշանները:<br><br>Անգիտակից տուժածին Կողքային անվտանգ դիրքի (ԿԱԴ) բերման մեթոդիկան:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքները</td></tr>
<tr><td colspan="2">Կարողանալ  գնահատել օրգանիզմի կենսագործունեությունը (“CAB”):<br><br>Համեմատել գիտակցության մակարդակները:<br><br>Գնահատել տուժածի գիտակցության վիճակը և խանգարման ձևերը:<br><br>Անգիտակից տուժածին բերել կողքային անվտանգ դիրքի՝ ԿԱԴ-ի:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակությունը</td></tr>
<tr><td colspan="2">Գիտակցության խանգարումներ: Անգիտակից տուժածին կողքի ապահովության դիրքի (ԿԱԴ) բերելը</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Ստուգել պայմանական տուժածի մոտ գիտակցության խանգարման առկայությունը</td><td>Գիտակցություն</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br><br>Կենսաբանություն: Գիտակցություն:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ</td></tr>
</table>

| |
|---|
| 2,15,39,46,48 |
| **Թեմա 11.2** |
| **Հասկացություն սահմանային վիճակների մասին: Սիրտ-թոքային վերակենդանացում (ՍԹՎ) (1ժամ):** |
| Նպատակը |
| Գիտենա սահմանային (Տերմինալ) վիճակ, փուլերը, ախտանիշները: Կյանքի և մահվան նշանները, որոշման մեթոդները:<br>Սրտի և շնչառության կանգի ժամանակ ախտաբանական պրոցեսները և վերականգման հրատապությունը:<br>Կլինիկական մահվան ախտանիշները:<br>Շնչառության կանգի առաջացման պատճառները, նշանները, փուլերը, առաջ եկող ախտաբանական պրոցեսները:<br>Շնչուղիների անցանելիության ապահովումը:<br>Արհեստական շնչառության իրականացման տեսակները («բերան-բերան», «բերան-քիթ» և այլն):<br>Սիրտ-թոքային վերակենդանացում (ՍԹՎ), փուլերը:<br>Կրծքային սեղմումներ և ներփչում, իրականացման կանոնները:<br>ՍԹՎ իրականացումը մեկ և երկու հոգով:<br>ՍԹՎ արդյունավետության գնահատումը:<br>Մահ: Դիակի հետ վարվելաձևի կանոնները: |
| Վերջնարդյունքները |
| Կարողանալ տարբերակել սահմանային վիճակի փուլերը, ախտանիշները:<br>Հստակ ախտորոշել կլինիկական մահը:<br>Պարզել շնչառության կանգի պատճառները:<br>Ապահովել շնչուղիների անցանելիությունը: Իրականացնել արհեստական շնչառություն («բերան-բերան», «բերան-քիթ» և այլ |

| | |
|---|---|
| մեթոդներով):<br>Կատարել  կրծքային սեղմումներ և ներփչումներ:<br>Իրականացնել ՍԹՎ մեկ և երկու հոգով: Գնահատել ՍԹՎ արդյունավետությունը: | |
| Բովանդակությունը | |
| Հասկացություն սահմանային վիճակների մասին: Սիրտ-թոքային վերակենդանացում (ՍԹՎ) | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Կարողանալ տալ  արհեստական շնչառություն, կատարել կրծքային սեղմումներ | Սահմանային վիճակ<br>վերակենդանացում |
| Միջառարկայական կապեր | |
| Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br>Կենսաբանություն: Սրտի և թոքի աշխատանքը: Արյունատար և շնչառական համակարգ | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 2,15,39,46,48 | |
| **Թեմա 11.3** | |
| **Թեմա 3. Շնչառության սուր խանգարումներ, շնչուղիների խցանումը օտար մարմնով (1ժամ):** | |
| Նպատակը | |
| Գիտենալ շնչառության սուր խանգարումներ, ասֆիքսիա<br>Շնչառության սուր խանգարումները, նշանները, պատճառները: | |

<table>
<tr><td colspan="2">Շնչուղիների անցանելիության խանգարումները (ասֆիքսիա):Առաջացման պատճառները, նշանները, զննումը, ԱՕ հիմունքները:<br><br>Շնչուղիների խցանումը օտար մարմնով, մասնակի և լրիվ խցանման նշանները:<br><br>Խցանված շնչուղիներով տուժածին ցուցաբերվող առաջին օգնության քայլերը (տարբեր տարիքային խմբերի):</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքները</td></tr>
<tr><td colspan="2">Կարողանալ ճանաչել շնչառության սուր խանգարումների նշանները, ելնելով տուժածի ինքնազգացողությունից, շնչառությունից, մաշկից և այլն:<br><br>Կատարել տուժածների զննումը շնչառական համակարգի սուր խանգարումների դեպքում, արագ կողմնորոշվել տուժածի վիճակում և ցուցաբերել առաջին օգնություն:<br><br>Ճանաչել մասնակի և լրիվ խցանման նշանները:<br><br>Օտար մարմնով խցանված շնչուղիներով տուժածին (տարբեր տարիքային խմբերի) ցուցաբերել առաջին օգնություն:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակությունը</td></tr>
<tr><td colspan="2">Շնչառության սուր խանգարումներ, շնչուղիների խցանումը օտար մարմնով</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Կատարել տուժածների զննումը շնչառական համակարգի սուր խանգարումների դեպքում</td><td>Շնչառության խանգարում<br><br>Շնչուղիների խցանում</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br><br>Կենսաբանություն: Շնչառություն: Շնչառական համակարգ:</td></tr>
</table>

| Կապը Հանրակրթության Չափորոշչի Միջին Դպրոցի Վերջնարդյունքների հետ |
|---|
| 2,15,39,46,48 |

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Առաջարկվում է 34 ԺԱՄ)

| Բաժին | Թեմա | Ժամաքանակ | Հիմնական գաղափարներ |
|---|---|---|---|
| 1. Ռազմարվեստի պատմություն․ ՀՀ Զինված ուժեր | 1.1. Հայկական բանակի ռազմավարությունն ու մարտավարությունը նոր դարաշրջանում | 4 | Հայրենասիրական դաստիարակություն,<br>Մարտական պատրաստության հիմունքներ |
| 2. Մարտավարության հիմունքներ | 2.1. Զինվորի գործառույթը մարտի դաշտում | 4 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 3. Մարտավարական-ֆիզիկական պատրաստություն | 3.1. Զինվորի տեղաշարժը մարտի դաշտում: | 2 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 4. Կրակային պատրաստություն | 4.1. Հրաձգության ինքնաձիգից: | 3 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| | 4.2. Ձեռքի բեկորային նռնակներ: | 2 | Մարտական պատրաստության |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հիմունքներ |
| 5. Ինժեներական պատրաստության հիմունքներ | 5.1. Ինժեներական ականապայթուցիկ միջոցներ | 2 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 6. Ռազմական տեղագրության հիմունքներ | 6. 1. Տեղագրական քարտեզի տվյալ կետում դեպի տեղանքի առարկան եղած ուղղության որոշումը: | 1 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 7. Լեռնային-հատուկ պատրաստության հիմունքներ | 7.1. Զինվորի գործունեությունը լեռնային պայմաններում: | 2 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 8. Իրավական պատրաստություն | 8.1. ՀՀ ԶՈՒ կանոնադրություն. Զինծառայողի պատասխանատվությունը: | 1 | Հայրենասիրական դաստիարակություն,<br>Մարտական պատրաստության հիմունքներ |
| | 8.2. Միջազգային մարդասիրական իրավունք (ՄՄԻ): Պատերազմի ժամանակ հակառակորդի քաղաքացիական բնակչության և ռազմագերիների հետ վարվելու կարգը: | 1 | Հայրենասիրական դաստիարակություն,<br>Մարտական պատրաստության հիմունքներ |
| 9. Շարային պատրաստություն | 9.1. Զինվորական պատիվ տալը հրամանատարին (ավագին)՝ նրա մոտով անցնելիս: | 1 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 10. Հոգեբանական պատրաստություն | 10.1. Զգուշություն, զգոնություն, ուշադրություն: | 1 | Մարտական պատրաստության հիմունքներ |
| 11. Անվտանգ կենսագործունեություն և կենսապահովում | 11.1. Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներ հատուկ օբյեկտներում: Զանգվածային և ոչ ընտրողական ոչնչացման զինմիջոցների գործադրում: | 3 | Անվտանգ կենսագործունեություն և կենսապահովում |

| | | | |
|---|---|---|---|
| | Վարքի կանոնները: | | |
| | 11.2. Կենսապահովումը արտակարգ իրավիճակներում. բնակատեղի (ապաստարանի) ձևավորումը և քողարկումը տեղանքում առկա միջոցներով: | 2 | Անվտանգ կենսագործունեություն և կենսապահովում |
| 12. Առաջին բուժօգնության հիմունքներ | 12.1. Ստամոքսաղիքային տրակտի խանգարումներ: Թունավորում: Նախազգուշական միջոցառումները: ԱԲՕ: | 1 | Առաջին բուժօգնության հիմունքներ |
| | 12.2. Ալերգիկ ռեակցիաներ: Նախազգուշական միջոցառումները: ԱԲՕ: | 1 | Առաջին բուժօգնության հիմունքներ |
| | 12.3. Արտաքին գործոնների ազդեցությունը: Արևահարում: Ցրտահարում: Նախազգուշական միջոցառումները: ԱԲՕ: | 2 | Առաջին բուժօգնության հիմունքներ |
| Ամփոփում | | 1 | |
| Ընդամենը | | 34 | |

| Թեմա 1.1. | |
|---|---|
| **Հայկական բանակի ռազմավարությունն ու մարտավարությունը նոր դարաշրջանում (4 ժամ)** | |
| Նպատակը | |
| Պատկերացնել, թե ինչպես էին Նոր դարաշրջանում նոր զինատեսակի կիրառումը, ռազմավարական և մարտավարական մտահղացումները ազդում ճակատամարտի և պատերազմի ելքի վրա:<br><br>Ձևավորել հայրենասիրական աշխարհայցք, կարևորել ազգի նվիրյալների, զինված պայքարի դերը ազգի և երկրի պաշտպանության գործում: | |
| Վերջնարդյունքները | |
| Կարող են նկարագրել 17-րդ դարում Սյունիքի ազատագրական պայքարում Դավիթ բեկի և նրա զինակիցների ռազմավարությանն ու մարտավարությանը:<br>Կարող են նկարագրել ֆիդայինների պարտիզանական գործողությունների ռազմավարությանը:<br>Գիտեն, թե ինչ նոր զինատեսակներ են ստեղծվել և կիրառվել 1-ին աշխարհամարտի ժամանակ և ինչպես դրանք ազդել մարտավարության վրա: Կարող են ներկայացնել Կովկասյան ճակատում և Մերձավոր Արևելքում հայ կամավորների սխրանքները:<br>Գիտեն անկախության համար Հայաստանի առաջին հանրապետության բանակի դերին՝ Մայիսյան հերոսամարտի օրերին:<br>Կարող են նկարագրել Լեռնահայաստանի համար պայքարում Գարեգին Նժդեհի կիրառած մարտավարություն: | |
| Բովանդակությունը | |
| 17-րդ դարում Սյունիքի ազատագրական պայքար: Դավիթ բեկի և նրա զինակիցների ռազմավարությունն ու մարտավարությունը:<br><br>Ֆիդայական շարժում: Անդրանիկ զորավարի մարտավարությունը:<br><br>1-ին աշխարհամարտ: Կամավորական շարժում: Հայկական լեգեոն:<br><br>Հայկական բանակը 1918–1920 թթ.: Մայիսյան հերոսամարտեր:<br><br>Լեռնահայաստանի ազատագրական պայքարը՝ Գարեգին Նժդեհի մարտավարությունը: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Զինղեկի ուղղորդմամբ անհատապես կամ ենթախմբով ինտերնետում ուսումնասիրում և ներկայացնում են 1-ին աշխարհամարտում առաջին տանկերի, ինքնաթիռների, սուզանավերի, մարտական քիմիական զենքի, գնդացրի, կապի միջոցների ազդեցությանը | Ռազմավարություն,<br><br>Մարտավարություն, |

| | |
|---|---|
| մարտական գործողությունների արդյունավետության վրա:<br><br>Զինղեկի ուղղորդմամբ անհատապես կամ ենթախմբով գրականությունից ուսումնասիրում և ներկայացնում են Գարեգին Նժդեհի <գայլախմբերի> մարտավարությունը: | Անուղղակի գործողություններ,<br><br>Ռազմական հնարքներ: |
| Միջառարկայական կապեր | |
| Ինֆորմատիկա: Կարողանան օգտվել համակարգչից և ինտերնետի տեղեկատվական հենքերից: Կարողանան նյութի համակարգչային ներկայացում ապահովել:<br><br>Ռուսերեն (այլ օտար լեզու): Կարողանան Ինտերնետի նյութը հասկանալ, թարգմանել հայերեն:<br><br>Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br><br>Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն: Ծանոթ լինեն Հին աշխարհի պատերազմների պատմությանը: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Ավագ Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 7,8,11,13,14,15,16,17,18,19,23,25,30,31,32,36,39,44,48 | |
| **Թեմա 2.1** | |
| **Զինվորի գործառույթը մարտի դաշտում (4 ժամ)** | |
| Նպատակը | |
| Իմանալ զինվորի հիմնական գործառույթները մարտի դաշտում՝ հարձակման ժամանակ, պաշտպանությունում, դետքում, դիտակետում, տիրապետել դրանց իրականացման ալգորիթմին, գործողությունների ձևերին ու միջոցներին, հստակ պատկերացում ունենալ, կարողանալ տեղաշարժվել, դիրքավորվել, քողարկվել, դիտարկում իրականացնել: | |
| Վերջնարդյունքները | |
| Կարողանում են ընտրել կրակային կամ դիտարկման դիրքը և դիրքավորվել, քողարկվել, դիտարկել հակառակորդին: Կարողանում են տեղաշարժվել մարտի դաշտում կամ դետքի կազմում, այդ թվում՝ քողարկված: | |
| Բովանդակությունը | |

<table>
<tr><td colspan="2">Զինվորը հարձակման ժամանակ:<br><br>Զինվորը պաշտպանությունում:<br><br>Զինվորը դետքում:<br><br>Զինվորը որպես դիտորդ:</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Զինղեկի ուղղորդմամբ Ինտերնետից գտնում են տեսաֆիլմեր <Զինվորի տեղաշարժը մարտի դաշտում> թեմայով, հեռադիտակների և գիշերային դիտարկման սարքերի մասին:</td><td>Մարտավարություն,<br><br>Հարձակում, պաշտպանություն,<br><br>Դիտարկում, քողարկում,<br><br>Զգուշություն, զգոնություն:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">Ինֆորմատիկա: Կարողանան օգտվել համակարգչից և ինտերնետի տեղեկատվական հենքերից: Կարողանան նյութի համակարգչային ներկայացում ապահովել:<br><br>Ռուսերեն (այլ օտար լեզու): Կարողանան Ինտերնետի նյութը հասկանալ, թարգմանել հայերեն:<br><br>Հայոց լեզու: Կարողանա կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր գաղափարները: Կարողանա իր մտքերը արտահայտել գրավոր և բանավոր եղանակով, այնպես, որ խոսքը համապատասխանի լսարանին:<br><br>Կենսաբանություն: Կենդանական աշխարհի ներկայացուցիչների քողարկումը բնության մեջ:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության Չափորոշչի Ավագ Դպրոցի Վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">2,4,5,12,15,19,30,31,33,34,39,41,46,47,48</td></tr>
<tr><td colspan="2">Թեմա 3.1.</td></tr>
<tr><td colspan="2">Զինվորի տեղաշարժը մարտի դաշտում (2 ժամ)</td></tr>
</table>

<table>
<tr><td colspan="2">Նպատակը</td></tr>
<tr><td colspan="2">Կարողանում են մարտական իրավիճակում հմտորեն, արագ փոխել կրակային դիրքը, քողարկված տեղաշարժվել՝ ապահովելով սեփական անվտանգությունը և մարտական առաջադրանքի հաջող կատարումը:<br>Կարողանում են հրաձգության մի կայուն դիրքավորումից հմտորեն անցնել մյուսին՝ կախված մարտական իրավիճակից:</td></tr>
<tr><td colspan="2">Վերջնարդյունքները</td></tr>
<tr><td colspan="2">Կարողանում են հմտորեն դեպի կողք գլորումով փոխել կրակային դիրքը:<br><br>Հակառակորդի քթի տակ կարող են հմտորեն և քողարկված սողեսող տեղաշարժող փոխել դիրքը (առաջ, հետ, աջ և ձախ), տեղաշարժվել անաղմուկ քայլերով:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակությունը</td></tr>
<tr><td colspan="2">Հրաձգության դիրքի փոփոխում՝ գլորումով դեպի կողք:<br><br>Քողարկված տեղաշարժ մարտի դաշտում. Քողարկված սողեսող տեղաշարժ (առաջ, հետ, աջ և ձախ): Անաղմուկ քայլերով տեղաշարժ:</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Ուսումնասիրել համապատասխան տեսադասերը:<br><br>Դեպի կողք, հետ ու առաջ գլորումով քողարկված տեղաշարժվել 10-ական մետր:<br><br>Տեղանքում՝ չոր ճյուղերի պայմաններում փորձել անաղմուկ քայլերով անցնել 20 մետր տարածություն:<br><br>Անցկացնում են գործնական վարժանքներ տվյալ թեմայով՝ յուրացնելով դրանք մինչև հմտություն: Վարժանքը սկզբում անել առանց զենքի, հետո միայն զենքով (դրա նմանակիչով):</td><td>Քողարկում,<br><br>Կարողություն, հմտություն,<br><br>Անվտանգություն, պաշտպանվածություն:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">Հայոց լեզու: Կարողանան նյութը ընկալել, յուրացնել:<br><br>Ֆիզկուլտուրա: Նախավարժանք: Աշակերտների ֆիզիկական որակների զարգացում․ ուժ, արագություն, ճկունություն, դիմացկունություն, շարժումների կոորդինացիա, հավասարակշռության զգացողություն:</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Կենսաբանություն: Մարմնի անատոմիան․ հենաշարժիչ, մկանաջլային, շնչառական համակարգեր: Հավասարկշռության և շարժումների կոորդինացիայի կենտրոններ (ներքին ականջ, ուղեղիկ): Վայրի գազանների անաղմուկ քայլելը որսի ժամանակ:<br><br>Ֆիզիկա: Հավասարակշռություն, շարժումների կոորդինացիա: Կայունություն, ծանրության կենտրոն: Իներցիա: Պտտական շարժում: Ուժի բազուկ: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Ավագ Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 3,4,5,6,15,33,39,46,47,48 | |
| **ԹԵՄԱ 4.1** | |
| **Հրաձգություն ինքնաձիգից (5 ժամ)** | |
| Նպատակը | |
| Տիրապետել հրաձգության կանոններին:<br><br>Իմանալ ինքնաձիգի հնարավոր խափանումները հրաձգության ժամանակ և կարողանալ դրանք վերացնել տեղում:<br><br>Կանխավ իմանալ փամփշտատուփում վերջին փամփուշտի մնալը, արագ փոփոխել այն և շարունակել հրաձգությունը՝ առանց փականակը քաշելու և ինքնաձիգը վերալիցքավորելու: | |
| Վերջնարդյունքները | |
| Տիրապետում են հրաձգության կանոններին:<br>Գիտեն ստուգել և վերացնել ինքնաձիգի խափանումները տեղում:<br>Գիտեն փամփշտատուփում վերջին փամփուշտի մնալը ահազանգելու ձևը և կարող են արագ փոփոխել այն՝ առանց ինքնաձիգը վերալիցքավորելու: | |
| Բովանդակությունը | |
| Ինքնաձիգից հրաձգության կանոնները:<br><br>Ինքնաձիգի հնարավոր խափանումները հրաձգության ժամանակ և դրանց վերացման եղանակները:<br><br>Ինքնաձիգի փամփշտատուփի դատարկման ահազանգումը և արագ փոփոխումը մարտի ընթացքում: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական |

| | գաղափարներ |
|---|---|
| Տվում է առաջադրանք՝ ինքնաձիգի պայմանական խափանում և առաջարկվում է վերացնել այն:<br>Ցուցադրվում է լուսածիր գնդակներով վերջին 3 փամփուշտի լիցքավորման ճանապարհով փամփշտատուփի ահազանգումը, հաշվարկվում է վերջին փամփուշտի տեղը, արագ փոխվում է փամփշտատուփը՝ դատարկ փամփշտատուփը նետելով հատուկ գրպանիկ: | Պատկերացումներ-գիտելիքներ-կարողություններ-հմտություններ,<br>Կանոն,<br>Անընդհատություն, շարունակականություն:<br>Անվտանգություն: |

Միջառարկայական կապեր

Ֆիզկուլտուրա: Ֆիզիկական որակներ՝ ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա:

նախավարժանք, ճիշտ (<փորով>) շնչառություն, շնչառական վարժանքներ:

Կենսաբանություն: Մարմնակազմություն՝ հենաշարժողական համակարգ, մկանային համակարգ, ջլեր: Շնչառական համակարգ, շնչառություն ստոծանիով (<փորով>): Հավասարակշռության և շարժումների կոորդինացիան կազմակերպող օրգաններ. ներքին ականջ և ուղեղիկ:

Ֆիզիկա: Հավասարակշռություն, ծանրության կենտրոն, կայունություն, պտտական շարժում, պտտման առանցք, գլորում, իներցիա, հետհարված:

Կապը Հանրակրթության Չափորոշչի Ավագ Դպրոցի Վերջնարդյունքների հետ

5,6,33,39,46,47,48

## ԹԵՄԱ 4.2.

**Ձեռքի բեկորային նռնակներ (2 ժամ)**

| Նպատակը |
| --- |
| Իմանալ ձեռքի բեկորային Փ-1, РГД-5, Ջ-1 նռնակների յուրաքանչյուրի նշանակությունը, ծանոթ լինել դրանց կառուցվածքին, հստակ իմանալ դրանց մարտավարական-տեխնիկական պարամետրերը, պատկերացնել դրանց անվտանգության մակարդակները և վստահ լինել դրանց կիրառման մեջ:<br><br>Տիրապետել ձեռքի բեկորային նռնակի նետման տեխնիկային տեղում կանգնած դրությունից: |
| **Վերջնարդյունքները** |
| Գիտեն ձեռքի բեկորային Փ-1, РГД-5, Ջ-1 նռնակների յուրաքանչյուրի նշանակությունը, ծանոթ են դրանց իրանի և բոցավառիչի ներքին կառուցվածքին և աշխատանքնին, կարող են ներկայացնել դրանց մարտավարական-տեխնիկական պարամետրերը, կարող են ցուցադրել դրանց անվտանգության 5 մակարդակները:<br>Կարողանում են տեղում կանգնած դրությունից ձեռքի ուսումնական բեկորային նռնակը ճիշտ նետել: |
| **Բովանդակությունը** |
| Ձեռքի բեկորային Փ-1, РГД-5, Ջ-1 նռնակների նշանակությունը, կառուցվածքը, մարտավարական-տեխնիկական պարամետրերը, անվտանգության մակարդակները:<br><br>Ձեռքի բեկորային նռնակի նետման տեխնիկան: |

| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| --- | --- |
| Քանդել-հավաքել ձեռքի ուսումնական նռնակը, ցուցադրել դրա անվտանգության 5 մակարդակները, բացատրել դրա բոցավառիչի աշխատանքը:<br><br>Ցուցադրել նռնակի նետման ճիշտ տեխնիկան: | Պատկերացումներ-գիտելիքներ-կարողություններ-հմտություններ,<br><br><Գրպանի հրետանի>,<br><br>Անընդհատություն, շարունակականություն: |

| | |
|---|---|
| | Անվտանգություն: |

**Միջառարկայական կապեր**

Ֆիզկուլտուրա: Ֆիզիկական որակներ՝ ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա:

նախավարժանք, ճիշտ (<փորով>) շնչառություն, շնչառական վարժանքներ, նռնակի նետում:

Կենսաբանություն: Մարմնակազմություն՝ հենաշարժողական համակարգ, մկանային համակարգ, ջլեր: Շնչառական համակարգ, շնչառություն ստոծանիով (<փորով>): Հավասարակշռության և շարժումների կոորդինացիան կազմակերպող օրգաններ. ներքին ականջ և ուղեղիկ:

Ֆիզիկա: Հավասարակշռություն, ծանրության կենտրոն, կայունություն, պտտական շարժում, պտտման առանցք, գլորում, իներցիա, անկյան տակ նետված մարմնի շարժումը, հետագիծ:

**Կապը Հանրակրթության Չափորոշչի Ավագ Դպրոցի Վերջնարդյունքների հետ**

5,6,33,39,46,47,48

## Թեմա 5.1.

### Ինժեներական զինամթերք (2 ժամ)

**Նպատակը**

Ճանաչել հակատանկային, հակահետևակային ականները, իմանալ դրանց նշանակությունը, դրանցից բխող վտանգը, ընդհանուր կառուցվածքը, հիմնական մարտավարական-տեխնիկական պարամետրերը, դրանց հետ վարվելու անվտանգության կանոնները:

Ծանոթ լինեն «ծուղակ-ականներից» բխող վտանգին:

Իմանալ ինժեներական արգելափակոցների, ականադաշտերի նշանակությանը: Ճանաչել ականադաշտերի նախազգուշացման նշանները:

**Վերջնարդյունքները**

Կարող են տարբերել հակահետևակային ПМН-1, ПМН-2, МОН-50, հակատանկային ТМ57 (ТМ-62) ականները, գիտի դրանց նշանակությունը, մարտավարական-տեխնիկական պարամետրերը, գիտի դրանց հետ վարվելու անվտանգության կանոնները:

<table>
<tr><td colspan="2">Օրինակներով վրա կարող են նկարագրել «ծուղակ-ականներից» բխող վտանգները:<br>Գիտեն ինժեներական արգելափակոցների, ականադաշտերի նշանակությունը առաջնագծի պաշտպանության համար: Կարող են նկարագրել ականադաշտերի նախազգուշացման նշանները:</td></tr>
<tr><td colspan="2">Բովանդակությունը</td></tr>
<tr><td colspan="2">Հակատանկային և հակահետևակային ականներ: Ծուղակ-ականներ: Ընդհանուր կառուցվածքը, նշանակությունը, մարտավարական-տեխնիկական պարամետրերը, անվտանգության միջոցառումները:<br><br>Ինժեներական արգելափակոցներ: Ականադաշտեր: Ականադաշտերի նախազգուշացման նշանները:</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանքներ</td><td>Ընդհանրական գաղափարներ</td></tr>
<tr><td>Նկարել ականադաշտերի զգուշացման նշանները:</td><td>Պատկերացումներ-գիտելիքներ-կարողություններ-հմտություններ,<br><br>Անվտանգություն․ պաշտպանվածություն-քողարկում:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապեր</td></tr>
<tr><td colspan="2">Ֆիզկուլտուրա: Ֆիզիկական որակներ՝ ուժ, արագություն, ճկնություն, դիմացկունություն, հավասարակշռության զգացողություն և շարժումների կոորդինացիա:<br><br>նախավարժանք, ճիշտ (<փորով>) շնչառություն, շնչառական վարժանքներ:<br><br>Աշխարհագրություն: Բնագիտություն: Տեղանք: Տեղանքի տեսակները և բնութագրերը: Հողային կազմը:<br><br>Ֆիզիկա: Պայթյուն:</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության Չափորոշչի Ավագ Դպրոցի Վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">5,6,33,39,46,47,48</td></tr>
<tr><td colspan="2">Թեմա 6.1.</td></tr>
<tr><td colspan="2">Տեղագրական քարտեզի տվյալ կետում դեպի տեղանքի առարկան եղած ուղղության որոշումը (1 ժամ)</td></tr>
<tr><td colspan="2">Նպատակը</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Ուղղորդված անկյան օգնությամբ տեղագրական քարտեզի տվյալ կետում որոշել դեպի կոնկրետ առարկան եղած ուղղությունը: | |
| Վերջնարդյունքները | |
| Գիտեն ինչ է տեղագրական քարտեզի կոորդինատային և կիլոմետրային ցանցը, ինչ է ուղղորդված անկյունը:<br>Ուղղորդված անկյան օգնությամբ կարողանում են տեղագրական քարտեզի տվյալ կետում որոշել դեպի կոնկրետ առարկան եղած ուղղությունը: | |
| Բովանդակությունը | |
| Տեղագրական քարտեզի տվյալ կետում դեպի տեղանքի առարկան եղած ուղղության որոշումը:<br>Տեղագրական քարտեզի կոորդինատային և կիլոմետրային ցանց. ուղղորդված (դիրեկցիոն) անկյուն: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Սովորել տեղանքի առարկաների պայմանական նշանները:<br>Տեղագրական քարտեզի վրա, որևէ կոնկրետ կետում որոշել տրված առարկայի ուղղորդված անկյունը: | Տեղանք,<br>Քարտեզ, կոորդինատային և կիլոմետրային ցանց,<br>Ուղղորդված (դիրեկցիոն) անկյուն: |
| Միջառարկայական կապեր | |
| Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br>Բնագիտություն: Աշխարհագրություն: Երկիր, հորիզոնի կողմեր, աշխարհագրական և մագնիսական բևեռներ, հասարակած, միջօրեականներ և զուգահեռականներ, երկայնություն և լայնություն, կոորդինատներ, միավորներ, տեղանք, ռելիեֆ, տեղանքի առարկաներ, տեղագրական քարտեզ, պայմանական նշաններ, կոորդինատային և կիլոմետրային ցանց, ուղղորդված (դիրեկցիոն) անկյուն: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Ավագ Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 3,4,5,6,39,48 | |

| Թեմա 7.1. | |
| --- | --- |
| **Զինվորի գործունեությունը լեռնային պայմաններում (2 ժամ)** | |
| Նպատակը | |
| Ներկայացնել լեռնային տեղանքի մարտավարական հատկանիշները հարձակման և պաշտպանության տեսանկյունից: Իմանալ լեռնային խիստ պայմաններում գործելու նախապայմանները: | |
| Վերջնարդյունքները | |
| Կարող են նկարագրել լեռնային ռելիեֆը, տալ դրա մարտավարական հատկանիշները, թվարկել լեռնային վտանգները և դրանց նախապատրաստվելու ձևերը: | |
| Բովանդակությունը | |
| Լեռներ: Լեռնային պայմանները: Լեռնային տեղանքի մարտավարական հատկանիշները:<br><br>Նախապատրաստական աշխատանքներ․ ֆիզիկական-հոգեբանական պատրաստություն, տեխնիկական պատրաստություն, փործի ձեռքբերում, բարձ-լեռնային պայմաններին հարմարվելը, համապատասխան հանդերձանքով, սննդով ապահովումը: | |
| Գործնական աշխատանքներ | Ընդհանրական գաղափարներ |
| Դիտել տեսաֆիլմ լեռնային զորքերի մասին: | Լեռնային պայմաններ,<br><br>Մարտավարական հատկանիշներ, դժվարությունների հաղթահարում: |
| Միջառարկայական կապեր | |
| Հայոց լեզու: Կարողանան նյութը ներկայացնել համակարգված, իրենց մտքերը արտահայտել գրագետ, տրամաբանված և համոզիչ:<br><br>Բնագիտություն: Աշխարհագրություն: Երկիր, տեղանք, լեռնային ռելիեֆ, տեղանքի առարկաներ, լեռնագագաթներ, սառցադաշտեր, եղանակը լեռներում, օդի ճնշումը թթվածի պարունակությունը բարձր-լեռնային շրջանում, քամիները լեռներում, թթվածնային քաղց, լեռնագնացներ:<br><br>Կենսաբանություն: Ֆիզիոլոգիան լեռներում․ շնչառության համակարգ, թթվածնային քաղց, արյան շրջանառությունը և սրտի | |

| | |
|---|---|
| աշխատանքը լեռներում, շնչարգելություն, աշխատունակություն, արևահարություն, ցրտահարություն, ջրազրկում,:<br>Ֆիզիկա: Մթնոլորտային ճնշում, լեռնային օպտիկա, կայծակ, խոնավություն, ջրի եռման աստիճանը ըստ բարձրության: | |
| Կապը Հանրակրթության Չափորոշչի Ավագ Դպրոցի Վերջնարդյունքների հետ | |
| 4,26,30,34,46,47,48 | |
| **Թեմա 8.1.** | |
| **ՀՀ ԶՈՒ կանոնադրություն. Զինծառայողի պատասխանատվությունը (1 ժամ)** | |
| Նպատակը | |
| Պատկերացնել բանակային ծառայության առանձնահատկությունները, բանակային կարգ ու կանոնը, զինծառայողի պատասխանատվությունը: | |
| Վերջնարդյունքները | |
| Գիտեն ի՞նչ է պատասխանատվությունը և ինչ պատասխանատվություն է սպասվում զինծառայողին պետերի հրամանը չկատարելու (ոչ պատշաճ կատարելու) դեպքում: | |
| Բովանդակությունը | |
